

ՄԱՍ Բ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐԶԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԽՃԱՆԿԱՐՈՒՄ ԺԳ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

2.1 ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՅ-ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

«Նա («Սսի իշխողը») արքաների սերունդների շատ հին արքա է, ով հավաստիացնում է, թե ինքը սերում է կոստանդինյան տնից (հարստությունից՝ *al-bayt al-Qusṭantīnī*): Նրանց արքաներին թափնուր (*takfūr*) անունով են կոչել, որ նրանց է վերագրվել, ինչ նրանք կան և ընդհուպ մինչև օրս: Ես իմ տեսակետն ունեմ կոստանդինյան տնից լինելու նրանց պնդման առնչությամբ: Եթե այս տանը պատկանողները հռոմական ծագման (*ṣalībat al-rūm*) լինեին, ապա նրանք մեղփիտյան (*malkāniyya*) դավանանք կունենային: Մինչդեռ թափնուրի տունը հայկական է, իսկ նրանց դավանանքը «հակոբիկյան» (*yaʿāqiba*) կամ դրան մոտ մի դավանանք է. ընդամին երկու դավանանքների միջև մեծ հեռավորություն և [ակնհայտ] տարբերություններ կան: Ամենն, ինչ գիտենք այս տան մասին, այն է, որ նրանց մեծ պապը հնում՝ առաջին արքաների վաղեմի ժամանակներում, այս երկրների Բրիտանյանների (*naṣāra > naṣrānī*, այն է՝ «նազարեթցի») առաջնորդն է եղել: [Այս] Բրիտանյանները կավաշեն տների մարդիկ են (*ahl al-madara*, հավանաբար հակադրում է բեդվին վրանաբնակներին), և նրանց զանազան զբաղմունքներից են հյուսնի (*nağğār*, «ձեռագործ վարպետի» և հողագործի (*akara*) արհեստները»:

Ալ-Ումարի, «*Քիթաբ ալ-Թարիֆ*»³¹⁹

³¹⁹ Տե՛ս *al-ʿUmārī*, *Al-Taʿrīf*, ֆ. 55: Հմմտ. *al-Qalqaṣandī*, *Ṣubḥ al-aʿšā*, ց. 8, ֆ. 30: Մուսուլմանական մատենագրության մեջ հայոց արքաներին վերագրված *takfūr* տիտղոսին նվիրված ուսումնասիրություն ունենք: Այն նախ հրատարակվել է անգլերեն: Տե՛ս *G.G. Danielyan*, “The

ԺԳ դարի կեսերին Եգիպտոսում տեղի ունեցան իրադարձություններ, որ արմատապես փոխեցին քաղաքական իրադրությունը ոչ միայն Եգիպտոսում, այլև ողջ Մերձավոր Արևելքում: Այյուբյան բանակի վաղուց արդեն բաղկացուցիչ տարր դարձած և Սալահ ալ-Նինի հիմնադրած Հարսուլթյան վերջին ազդեցիկ տիրակալի՝ ալ-Սալիհ Նաջմ ալ-Դին Այյուբի (1240-1249 թթ.) օրոք գերակշռություն հասած և մեծ արտոնություններ ստացած մամլուքները (արաբ․՝ mamlūk < mamālīk, այն է՝ «ստրուկ»)՝³²⁰ մեծամասամբ թյուրք-ղփչաղյան ծագման ռազմական ստրուկները, նրա մահից հետո իրենք իսկ երկրի կառավարման հայտ ներկայացրին և բարեպատեհ հանգամանքների բերումով կարճ ժամանակում իրենց ազդեցիկ խմբավորումներից մեկի՝ «Բահրիյեի» (al-Bahriyya կամ al-Bahriyya al-ṣālihiyya) գլխավորությամբ հայտնվեցին պետության կառավարող վերնախավում³²¹: Խաչակիրների հետ պատերազմի թոհուրեհում (1249 թ.), սուլթան ալ-Սալիհի մահվան փաստը մի քանի ամիս շարունակ գաղտնի պահելով,

Title T'agavor / Takfūr in the Medieval Muslim Historiography”, *RÉA*, № 36, Paris, 2014-2015, pp. 61-80: Ապա մի քանի գործընկերների հետ հեղինակած կոլեկտիվ մենագրության մեջ լույս է տեսել վերջինիս փոքր-ինչ ընդլայնված հայերեն տարբերակը: Տե՛ս Գ. Դանիելյան, «Քաղավուր / քաֆուր» տիաղոսը միջնադարյան մուսուլմանական մասնագրության մեջ», և. Բողոյան (խմբագիր), Թ. Շուբուրով, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Դանիելյան, Կրիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաբանասիրական ակնարկներ) (հետալստ՝ ԿՀ (2016)), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 163-198: Վերջերս էլ հիշյալ կոլեկտիվ ժողովածուն թարգմանվել է անգլերեն: Տե՛ս G. Danielyan, “The Title T'agavor / Takfūr in Medieval Muslim Historiography”, in *CA* (2019), pp. 151-182:

³²⁰ D. Ayalon, “Aspects of the Mamlūk phenomenon (Part I-II)”, *Der Islam*, 53/54, 1976 / 1977, pp. 196-225, pp. 1-32. Մինչև Մամլուքյան սուլթանության հիմնադրումը մուսուլմանական իրականության մեջ մամլուք ռազմիկների օգտագործման երևույթի էլ ավելի հանգամանալից ուսումնասիրությունը տե՛ս Aḥmad Muḥtār al-‘Abādī, *Qiyām dawlat al-mamālīk al-‘ulā fī Miṣr wa-l-Šām*, Dār al-Nahḍa al-‘arabiyya, Bayrūt, 1986, §. 11-113.

³²¹ Իբն ալ-Խալաթարիի վկայությամբ՝ «[Սուլթանն] այնքան թյուրք մամլուքներ գնեց, որ նրանից առաջ ոչ մի արքա նրա չափ չէր գնել, մինչև որ գորքի մեծամասնությունն իր մամլուքները դարձան»: Տե՛ս Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, ց. 7, bi-taḥqīq Sa‘īd ‘Abd al-Fattāh ‘Āṣūr, al-Qāhira, 1972, §. 370: Ալ-Սալիհ Այյուբի «մամլուքյան» ֆաղաֆականության մասին տե՛ս A. Levanoni, “The Mamluks’ Ascent to Power in Egypt”, *SI*, № 72, 1990, pp. 121-144: Այս մամլուքներ «բահրի» կոչվեցին, քանի որ սուլթանը նրանց զորանցները տեղակայել էր Նեղոսի (*baḥr al-Nīl*) կղզիներից մեկում (*al-Rawḍa*): Տե՛ս al-Maqrizī, *Al-Sulūk*, ց. 1.2, §. 340:

երկրի փաստական կառավարումը ստանձնեց նրա այրին՝ Շաջար (կամ Շաջարաթ) ալ-Դուրը³²² սպասելով ալ-Սալիհի որդու՝ Մուազզամ Թուրան-շահի ժամանմանը Կահիրե։ Ավելորդ չէ նշել Ֆրանկների նկատմամբ ալ-Մանսուրայի (al-Manṣūra) ճակատամարտում տարած հաղթանակում և առհասարակ ինչպե՞րաց է արշավանքին դիմադրավելու գործում հենց Բահրիների ունեցած վճռական դերակատարությունը³²³։ Ինչևէ, 1250 թ. գահ բարձրացած Թուրան-շահը հոսսահատ փորձ արեց իշխանություն օղակներից դուրս մղել իր հոր մամուլներին, բայց շուտով ինքը սպանվեց՝ դառնալով նրանց խարդավանքի զոհ։ Սաիդ Աշուրի բնութագրմամբ՝ «Թուրան-շահի մահից հետո մամլուխներն առաջին և վերջին խոսքի տերը դարձան երկրի գործերում»³²⁴։ Նրա փոխարեն սուլթանական գահին նստեց Շաջար ալ-Դուրը (umm/wālidat Ḥalīl) և հռչակվեց «մուսուլմանների թագուհի» (malikat al-muslimīn)³²⁵ ու անգամ իր անունով դրամ հատեց³²⁶։ Բայց կնոջ միահեծան իշխանության գաղափարը խորթ էր մուսուլմանական քաղաքական մտքին ու կրոնական գաղափարախոսությունը և տրտուները հարուցեց իսլամական աշխարհում³²⁷։ Այս պարագայում մի քանի ամիս կառավարելուց հետո Շաջար ալ-Դուրը ամուսնացավ մամուլ էմիրներից մեկի՝ Իզզ ալ-Դին Ալբաքի հետ, ով կարճ ժամանակ անց սուլթան հռչակ-

³²² Վերևում արդեն նշել եմ, որ ըստ մամլուխ որոշ պատմիչների՝ նա ազգությամբ հայ կամ թուրք սուրկուհի էր, ում ալ-Սալիհն ազատություն էր շնորհել ու կնության առել։ Տե՛ս, օրինակ, **Abū al-Fidāʾ**, *Al-Muḥtaṣar*, ց. 2, ց. 300; **al-ʿUmārī**, *Masālik al-abṣār*, ց. 27, ց. 241; **al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 1.2, ց. 361-362։ Շաջար ալ-Դուրի մասին մանրամասն տե՛ս **G. Schregle**, *Die Sultānīn von Ägypten, Šağarat ad-Durr*, Otto Harrassowitz, Wiesbaden, 1961; **A. Levanoni**, “Šağarat ad-Durr: A Case of female sultanate in Medieval Islam”, in *Egypt and Syria in the Fatimid, Ayyubid and Mamluk eras*, vol. III, ed. by U. Vermeulen and J. Van Steenbergen, Uitgeverij Peeters, Leuven, 2001, pp. 209-218։

³²³ **A.M. Al-ʿAbādī**, *Qiyām*, ց. 110.

³²⁴ **S.A.F. ʿĀšūr**, *Al-ʿAṣr al-Mamālīkī*, ց. 11.

³²⁵ **Al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 1.2, ց. 361; **Abū al-Fidāʾ**, *Al-Muḥtaṣar*, ց. 2, ց. 288, 300.

³²⁶ **Al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 1.2, ց. 362.

³²⁷ Ըստ ալ-Մակրիզիի և մի քանի այլ պատմիչների՝ իր դժգոհությունը հայտնեց նաև Աբբասյան խալիֆա ալ-Մուաթասիմը, ով հեղհեղական նամակ հղեց Կահիրե՝ ասելով. «Եթե ձեզ մոտ վերջացել են տղամարդիկ, հայտնե՛ք մեզ, և մենք ձեզ կուղարկենք մեկին»։ Տե՛ս **al-Maqrīzī**, *Al-Sulūk*, ց. 1.2, ց. 368։

վեց al-Malik al-Mu‘izz (1250-1257 թթ.) գահակալական անվամբ³²⁸: Ահա այս անցքերով նշանավորվեց մի պետությունից ստեղծումը, որը մուսուլմանական մատենագրության մեջ Dawlat al-atrāk կամ al-Dawla al-turkiyya անվանումներով է արձանագրվել, իսկ արդի պատմագրության մեջ «Մամլուքյան սուլթանություն» անվանումն է ստացել: Եվ չնայած մամլուքներից ևս տասը տարի պահանջվեց իրենց իշխանությունը հաստատուն կռիվների վրա դնելու համար, այնուհանդերձ այս պետության ծննդյան թվական է ընդունված համարել 1250-ը: Այս ղեպքերից մոտ 130 տարի անց չերքեզական ծագման մամլուքյան մեկ այլ խմբավորման առաջնորդ Սայֆ ալ-Դին Բարկուկը (1382-1389, 1390-1399 թթ.), զավթելով իշխանությունը, հիմնադրեց մուսուլման պատմիչների կողմից Dawlat al-jarākisa կոչված, իսկ արդի պատմիչների կողմից «Բուրջի» հորջորջված դինաստիան, որն իշխեց Ասորիքում և Եգիպտոսում մինչև օսմանցիների կողմից տապալվելը³²⁹:

³²⁸ Ռ. Իրվինի համոզմամբ Այբաք չի պատկանել Բահրի խմբավորմանը, ավելին՝ զան է բարձրացվել արևմտի ոչ մամլուքյան տարրերի կողմից՝ նրանց իշխանության օղակներից հեռացնելու համար: Այբաքը, սակայն, անկարող է եղել դիմադրել Բահրիների նշմանը՝ հարկադրվելով իշխանությունը երկու տարի (1252-1254 թթ.) կիսել նրանց դրածո Այյուբյան արքայազն, ալ-Մալիք ալ-Փալիի թոռ ալ-Աշրաֆ Մուսայի հետ որպես վերջինիս աթաբեկ և սուլթանական բանակի հրամանատար: Տե՛ս **R. Irwin**, *The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250-1382*, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986, pp. 26-27:

³²⁹ Տե՛ս **D. Ayalon**, “The Circassians in the Mamlūk kingdom”, *JAOS*, vol. 69.3, 1949, pp. 137-138: 1250-1517 թթ. Եգիպտոսում իշխանության ղեկին եղած ֆաղափական այս երկու խմբավորումների էթնիկական և լեզվական ծագումը հաշվի առնելով՝ միջնադարի արաբագիր պատմիչներն իրենց երկերում նրանց սուլթանությունը և կառավարող դինաստիան առավել հաճախ կոչում են համապատասխանաբար dawlat al-atrāk կամ al-dawla al-turkiyya, այն է՝ «*թյուրքերի հարստություն*» և dawlat al-ğarākisa, այն է՝ «*չերքեզների հարստություն*»: Հետևապես «*Բահրիների սուլթանություն*» և «*Բուրջիների սուլթանություն*» անվանումներն այստեղ լրիվ պայմանականորեն են կիրառված: Երկու եզրերի օգտագործման աննպատակահարմարության հարցին անդրադարձել է Գ. Այալոնը: Տե՛ս **նույնի**՝ “Bahri Mamlūks, Burji Mamlūks: inadequate names for the two reigns of the Mamluk sultanate”, *Tārīḥ*, vol. 1, 1990, pp. 3-53 և “Al-Bahriyya”, in *IE²*, vol. 1, pp. 944-945: Հետևաբար ըստ Կոբի Ֆոսեթի՝ մամլուքյան կառավարող վերնախավի բնութագրիչ հատկանիշը ոչ թե նրանց ստրկական ծագումն է՝ «*մամլուք*» լինելը, այլ ազգային պատկանելությունը՝ Բահրիների դեպքում «*թյուրք*» կամ «*չփշաղ*» լինելը, Բուրջիների դեպքում՝ «*չերքեզ*»: Տե՛ս **K. Yosef**, “Dawlat al-atrāk or dawlat al-mamālīk? Ethnic origin or slave origin as the defining characteristic of the ruling

ԺԳ դարի կեսը բախտորոշ ժամանակաշրջան էր նաև Կիլիկիայի Հայոց թագավորության համար: Սա կապված էր հիմնականում դեպի Առաջավոր Ասիա և Մերձավոր Արևելք մոնղոլների հաղթական շարժի և ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրադրություն հետ: Հեթոմարքայի (1226-1269 թթ.) դիվանագիտական հեռատեսությունը թույլ տվեց խուսափել նոր նվաճողների հետ բախումից և երկիրը զերծ պահել նրանց ավերիչ ներխուժումից: Հատկանշական է, որ մինչև մոնղոլների հայտնվելը Հայոց թագավորությունը գտնվում էր Ռումի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանություն հանձնարարության ներքո³³⁰: Սակայն երբ 1243 թ. Քյոսեդաղի (Չամակատուկի) ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո մոնղոլներին հնազանդվեցին նաև Ռումի սելջուկները, վտանգը շատ մոտ և հետևաբար միջազ-

élite in the Mamlūk sultanate”, *JSAI*, vol. 39, 2012, pp. 387-410, ինչպես նաև նույնի՝ “The Term *Mamlūk* and Slave Status during the Mamluk Sultanate”, *al-Qanṭara*, XXXIV 1, enero-junio 2013, pp. 7-34:

³³⁰ Սրա համար հիմք է տալիս առկա դրամագիտական նյութը, ֆանգի հայտնի է, որ Ալա ալ-Դին Փայկուբադ (կառ. 1220-1237 թթ.) և Դիյաս ալ-Դին Փայխսուրով (1237-1246 թթ.) սուլթանների օրոք հաստիք են հայ-սելջուկյան երկկեզվյալ դրամներ, որոնց մի երեսին դրոշմված է «Հեթում թագաւոր հայոց», իսկ դարձերեսին՝ հիշյալ սուլթանների անունների արաբատառ մակագրություններն են: Տե՛ս **P.Z. Bedoukian**, *Coinage of Cilician Armenia (Revised edition)*, Danbury, Connecticut, 1979, pp. 227-235: Միջնադարյան աղբյուրներում Իկոնիայի սուլթանությանը հայոց թագավորության հարկ վճարելու մասին վկայություններ չգտնելով՝ որոշ հետազոտողներ կարծիք են հայտնել, որ այդ դրամները կտրվել են առևտրատնտեսական նպատակներով (**Պ. Սապալադեան**, «Հերում Ա-ի Հերում-Ջապել եւ երկկեզուեան դրամներու մասին», ՀՀՀ, հատոր Բ, Պէյրուք, 1980, էջ 233-248), սակայն ամենատարածված տեսակետն այն է, որ Հերումը դրամի հատել է ի նշան իր հնազանդության, որը հավանաբար ձևական բնույթ էր կրում: Տե՛ս **P.Z. Bedoukian**, *Coinage*, p. 84: Հմտ. **Cl. Cahen**, *La Turquie pré-ottomane (Varia Turcica VII)*, Institut Français d’Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 88-89: Տե՛ս նաև **Y.T. Nercessian**, *Attribution and Dating of Armenian Bilingual Trams*, Armenian Numismatic Society, Special Publication № 2, Los Angeles, 1983: Հմտ. **A. Stewart**, *Kingdom*, 2001, pp. 43-44, n. 2; **Լ. Տեր-Պետրոսյան**, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն* (Հայկական մատենաշար Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան), Երևան, 2007, էջ 299-301: Այնուամենայնիվ, մեզ հայտնի աղբյուրներից Ռումի սուլթանությանը հայոց թագավորության հարկատու լինելու մասին ակնարկներ կան Իբն Բիբիի և ալ-Ումարիի մոտ: Իբն Բիբիի տեղեկությամբ արդեն անդրադարձ կատարվել է (տե՛ս **Հ. Պ. Տեր-Պօղոսեան**, «Հայաստան Իբն Բիբիի համեմատ», ՀԱ, 1960, № 10-12 (Հոկտեմբեր-Դեկտեմբեր), էջ 488-492), իսկ ալ-Ումարիի վկայությունը տե՛ս ներկում:

գային դիվանագիտական նոր հայեցակարգի որդեգրումն օրապահանջ դարձավ նաև Կիլիկյան Հայաստանի համար: Ձևավորված քաղաքական պայմաններում երկրի ռազմավարչական վերնախավը՝ հանձին Հեթում թագավորի, որոշում կայացրեց մոնղոլների գերակայությունն ընդունելով հաշտություն եզրեր փնտրել նրանց հետ: Արաբ մատենագիր Էլ-Ումարին այդ մասին այս կերպ է գրում՝ չկարողանալով թաքցնել հայերի նկատմամբ տածած անհանդուրժողական վերաբերմունքը. «Եվ վերջապես նրանց (հայերի) հպատակությունը Ռումի սելջուկյան արքաների մնացած մասի նկատմամբ էր (*li-baqiyyat al-mulūk al-salāḡiqa bi-l-Rūm*), և նրանց վրա [գլխա]հարկ ու [բոլորին] հայտնի հնազանդություն կար սահմանված, և սելջուկյան արքայի կողմից երկրի վրա գործակատար-վերակացուներ (*al-‘ummāl wa-l-šihānī ‘alā al-bilād*) կային կարգված, մինչև որ թուլացավ այդ [սելջուկյան] պետությունը... ինչին տեսնում էր այդ անիծյալը (Հայոց արքան), և նրա թոշնակն արծվի վերածվեց, ու հանախացան նրա երդմնագանցությունները... և նա գրավեց այս երկրներն ու տիրեց դրանց և [աստիճանաբար] նվազեցնելով սելջուկների ժառանգությունը՝ [վերջնականապես] յուրացրեց այն»³³¹: Իսկ Ֆրանսիացի պատմիչ Ժան դը Ժուանվիլի (մահ. 1317 թ.) մոտ կարդում ենք. «Հայոց թագավորն Իկոնիայի սուլթանից ունեցած կախվածությունից ազատվելու համար ուղևորվեց թաթարների արքայի մոտ և հնազանդվեց, որպեսզի նրանց աջակցությունը ստանա»³³²:

Մոնղոլ զորավար Բաչու-նոյինի (կամ նոյան, այն է՝ «հրամանատար») հետ սկսած բանակցություններն արգասաբեր եղան: 1248 թ. Սմբատ Սպարապետի և 1254 թ. Հեթում արքայի՝ համապատասխանաբար Գույուկ (1246-1248 թթ.) և Մանգու (1251-1259 թթ.) խաների արքունիքներ կատարած դեսպանագնացություններով Կիլիկիո Հայոց թագավորությունը նույնպես վերջնականապես ստորակա դարձավ մոնղոլներին: Հեթումի միջնորդությամբ մոնղոլների գերակայությունն ընդունեց նաև Անտիոքի պրինց Բոհեմունդ Զ-ը (1252-1275 թթ.),

³³¹ St' u al-'Umārī, *Al-Ta'rif*, §. 55: Հմմտ. al-Qalqaṣandī, *Subḥ al-a'ṣā*, §. 8, §. 30:

³³² *Memoirs of the Crusades* by Villehardoin & de Joinville, tr. by Sir Frank Marzials, London & New York, 1908, p. 171.

ով հայոց գահակալի փեսան էր՝ նրա Սիբիլ դստեր ամուսինը³³³։ Նույն Մանգու խանի օրոք նրա եղբայր Հուլադուն ավարտին հասցրեց Իրանի նվաճումն ու հիմնադրեց մոնղոլական Իլխանությունը (1256-1335 թթ.)։

Դառնալով Մամլուքյան եգիպտոսին՝ նշենք, որ Այբաքը սուլթանության ղեկին մնաց յոթ տարի։ Նրա կառավարման շրջանը լի էր ներքաղաքական ցնցումներով և արքունական խարդավանքներով, որոնցից մեկի գոհն էլ ինքը դարձավ։ Նախ 1254 թ. նա սպանեց Բահրինների առաջնորդ Ֆարիս ալ-Դին Ակտային և գահընկեց արեց նրանց դրածո սուլթան ալ-Աշրաֆ Մուսային։ Բահրինների մնացած մասը՝ Բայբարս ալ-Բունդուկդարիի գլխավորությամբ ստիպված եղավ փախչել եգիպտոսից և ապաստան փնտրել Ասորիքում՝ ծառայություն անցնելով նախ Դամասկոսի և Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Նասիր Յուսուֆի, այնուհետև՝ Քարաքի տեր ալ-Մուդիս Ումարի մոտ։ Մասնավորապես հենց Բահրինների հորդորներով վերջինս երկու ռազմարշավ ձեռնարկեց եգիպտոսի դեմ, բայց երկու դեպքում էլ ձախողվեց³³⁴։ 1257 թ. Կահիրեում քաղաքական իրավիճակը կրկին շիկացավ։ Սա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Այբաքը վճռեց կնություն առնել Մոսուլի տեր Բադր ալ-Դին Լուլուի³³⁵ դստերը։ Այս մասին

³³³ *Les gestes des Chiprois*, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887, p. 161, ինչպես նաև P. Crawford, *The 'Templar of Tyre', Part III of the 'Deeds of the Cypriots'* (հետագայ՝ *Deeds of the Cypriots*), Ashgate, Aldershot, 2003 (reprinted by Routledge, London & New York, 2016, p. 34; **Hayton**, *La Flor des estoires de la Terre d'Orient*, Recueil des historiens des croisades. Documents arméniens, t. 2, p. 171.

³³⁴ **S.A.F.** *Āšūr*, *Al-'Ašr al-Mamālīkī*, §. 24; **R. Irwin**, *The Middle East*, p. 30; **R.S. Humphreys**, *From Saladin to the Mongols: The Ayyubids of Damascus, 1193-1260*, State University of New York Press, Albany, 1977, pp. 331-333.

³³⁵ Բադր ալ-Դին Լուլուն ազգությամբ հայ էր, ում որպես մամլուֆ գնեկ էր Մոսուլի Զանգի աթաբեկ Նուր ալ-Դին Արպան Շահը (կառ. 1199-1211 թթ.)։ Բառնաճալով ռազմավարական աստիճանակարգերով՝ նա 1211 թ. մանվան մահնում գտնվող Արպան Շահի կողմից նշանակվել է նրա որդի ալ-Մալիֆ ալ-Կահիր Մասուդի խնամակալ և այդ պահից սկսած դարձել Մոսուլի փաստական կառավարիչը։ Ալ-Կահիրի մահից հետո նա եղել է նաև վերջինիս որդու խնամակալը։ Բադր ալ-Դինը Մոսուլի լիիրավ տեր է դարձել միայն 1233 թ., երբ պաշտոնապես «Իլխանության տվուլթյուն» (ինվեստիտուրա) է ստացել Բաղդադի խալիֆայից՝ որդեգրելով *al-Malik al-Raḥīm* գահակալական անունը։ Հայոց արքա Հեթումի պես ընդունել է մոնղոլների

խմանալով՝ Շաջար ալ-Դուլերը կազմակերպեց իր ամուսնու սպանությունը, բայց չկարողանալով աջակիցներ գտնել իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար՝ ինքը նույնպես սպանվեց³³⁶: 1257 թ. սուլթանության գահին նստեցվեց Այբաքի տասնհինգամյա որդին՝ ալ-Մանսուր Ալին (1257-1259 թթ.), թեև պետության փաստական իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց աթաբեկ Կուտուզը:

1259 թ., երբ իլխան Հուլաղուի մոնղոլական բանակներն արդեն գրավել էին Բաղդադը³³⁷, կործանել Աբբասյան խալիֆայությունը³³⁸ և

գերակայությունը և 1246 թ. դեսպանություն ուղարկել Կարակորում: Աջակցել է Հուլաղուի ասորիքյան արշավանքներին: Թեև իսլամացած էր, այնուամենայնիվ, միջնադարյան արաբական կենսագրական բառարանները նրա հայկական ծագման և դավանանքի մասին ուշագրավ տեղեկություններ են տալիս: Ալ-Ջահաբիի մոտ, օրինակ, կարդում ենք. «Ի շարս իր ժողովրդի մյուս ծեսերի՝ նա Մաղկազարդի տոնն (*ʿīd al-šaʿānīn*) էր տոնում: Նա չափազանց մեծ սեղան էր գցում, երգիչներ բերել տալիս և այդ ամբողջ ընթացքում գինու տակառներ [գատարկում], զվարճանում և բերդից ոսկեզրամներ նետում, իսկ [ներքևում խոնված] մարդիկ իրար ձեռքից էին խլում դրանք: Նրան ատեցին քրիստոնեական ծեսերը նշելու համար՝ ասելով. «Նա սիրով գովաբանում էր քրիստոնեական տոները՝ պնդելով, թե Աստված Մարիամի որդի Հիսուսն է...»: Տե՛ս **al-Dahabī**, *Siyaar*, ց. 23, ց. 357: Հմմտ. **al-Safadī**, *Al-Wāfi*, ց. 24, ց. 308: Բաղդ ալ-Դինին նվիրված երկու աշխատություն կա՝ **Sawādī** ‘**Abd Muḥammad al-Ruwayṣidī**, *Imārat al-Mawṣil fi ‘ahd Badr al-Dīn Lu’lu’*, 606-660 h. / 1209-1261 m., Maṭba‘at al-*Iršād*, Baḡdād, 1971 և **D. Patton**, *Badr al-Dīn Lu’lu’*, 1211-1259, Seattle and London, 1991, որոնք, ցավոք, այս աշխատանքը գրելիս ձեռքի տակ չեն ունեցել: Տե՛ս նաև Կող Կալենի հոդվածն «Իսլամի հանրագիտարան»-ում: Իմիջիայլոց, վերջինս սխալվում է պնդելով, թե Բաղդ ալ-Դինը հավանաբար սևամորթ ստրուկ էր: Տե՛ս **Cl. Cahen**, “Lu’lu’”, in *EF*², vol. 5, p. 821:

³³⁶ **S. ʿAqqūš**, *Tārīḥ al-Mamālīk*, ց. 51-52.

³³⁷ Ինչպես երևում է Կիլիկիայի հայկական զորքերը չեն մասնակցել Բաղդադի գրավմանը: Փոխարենը, ինչպես հայ պատմիչներն են վկայում, մոնղոլական զորքերի կազմում Բաղդադի և Մայաֆարիկի պաշարմանը մասնակցել են հայկական զինորդներ Բուն Հայաստանից: Հատկանշական է նաև, որ Մայաֆարիկի պաշարումը գլխավորել է Հուլաղուի որդի Յուլմուսը (Ջիսամուր): Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 384-385; Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի, լուսարանեալ աշխատասիրութեամբ Դ. Ալիշանի (Մատենագրութիւն նախնեաց: Պատմագիրք հայոց), Վենետիկ, 1862, էջ 152; *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արք եպիսկոպոսի Սրնեաց*, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կ.Վ. Շահնազարեանց, հտ. Բ, Փարիզ, 1859, էջ 150: Հմմտ. **Գրիգոր Ակնէրցի**, *Պատմութիւն թաթարաց*, Երուսաղէմ, Տպարան Սրբոց Յակոբեանց, 1974, էջ 41-42, ինչպես նաև **R.P. Blake**, **R.N. Frye**, “History of the Nation of the Archers (The Mongols) by Grigor of Akanc”, *HJAS*, vol. 12, № 3/4, 1649, p. 334: Տե՛ս նաև **Cl. Mutafian**,

պատրաստվում էին հաջորդ քայլով ներխուժել Ասորիք, եգիպտոսում տեղի ունեցավ ևս մեկ հեղաշրջում: Գահընկեց անելով ալ-Մանսուր Ալիին՝ Սայֆ ալ-Դին Կուտուբը իրեն հռչակեց սուլթան՝ al-Malik al-Muzaffar գահակալական անունով (1259-1260 թթ.): Հաշտության եզրեր գտնվեցին նաև Ասորիքում ապաստանած Բահրինների հետ, և Բայբարսն իր զինակիցների հետ վերադարձավ եգիպտոս:

Հուլիանոսի ասորիքյան արշավանքի մեկնարկը տրվեց հիջրայի 658 թ. (1259/1260 թ.)³³⁹: Նա՝ մոնղոլական զորքերի, ինչպես նաև հայկական, վրացական և Ռուսի սելջուկյան օգնական ուժերի գլուխ անցած, մոտեցավ Եփրատին³⁴⁰: Հակոբիկ եկեղեցու մափրիան Բար Հեբրեոսի (մահ. 1286 թ.) «Ժամանակագրության» արաբական խմբա-

L'Arménie, p. 145-146; **D. Bayarsaikhan**, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden-Boston, 2011, pp. 127-135:

³³⁸ 1258 թ. մոնղոլների կողմից Բաղդադի գրավումը նշանավորեց Աբբասյան խալիֆայության կործանումը: Այնուամենայնիվ, շատ չանցած (1260 թ.)՝ մամլուկյան սուլթան ալ-Ջահիր Բայբարսը (կառ. 1260-1277 թթ.) իր իշխանությանը լեգիտիմություն հաղորդելու նկատառումով Կահիրեում հանդիսավոր կերպով խալիֆա հռչակեց Աբբասյան դինաստիայի մի ներկայացուցչի՝ ալ-Մուսաթամսիր անունով, իսկ վերջինիս մահից հետո մեկ այլ թեկնածուի՝ ալ-Հաֆիմ անունով: Սուլթանն իր այդ հայլով, փաստորեն, վերականգնեց կործանված խալիֆայությունը, որը, թեկուզև ունենալով բացառապես խորհրդանշական և ծիսական-արարողակարգային բնույթ, իր գոյությունը պահպանեց մինչև օսման թուրքերի կողմից եգիպտոսի նվաճումն ու Մամլուկյան սուլթանության կործանումը (1517 թ.): Կահիրեի Աբբասյան խալիֆայության մասին տե՛ս **D. Ayalon**, “Studies on the Transfer of The ‘Abbāsid Caliphate from Bagdād to Cairo”, *Arabica*, vol. 7.1, 1960, pp. 41-59; **P.M. Holt**, Some Observations on the ‘Abbāsid Caliphate of Cairo, *BSOAS*, vol. 47.3, 1984, pp. 501-507; **S. Heidemann**, *Das Aleppiner Kalifat (A. D. 1261): Vom Ende des Kalifates in Bagdad über Aleppo zu den Resataurationen in Kairo*, E.J. Brill, Leiden, 1994, ինչպես նաև վերջինիս գրախոսությունը Ռ. Ամիտայի կողմից՝ **R. Amitai-Preiss**, “The Fall and Rise of the ‘Abbāsid Caliphate”, *JAOS*, vol. 116, № 3, 1996, pp. 487-494:

³³⁹ Ըստ **Հեթում Կոռիկսուցու** (Հայրոն) Ասորիքի գրավման ծրագրերին իր մասնակցությունն է ունեցել Հեթում արքան, և որ հենց նա է իլխանին խորհուրդ տվել առաջինը Հալեպին հարվածել: Տե՛ս **Hayton**, *La Flor*, p. 170:

³⁴⁰ **R. Amitai-Preiss**, *Mongols*, p. 26. Իբն Վասիլը գրում է. «Այս տարվա սկզբին Հուլիանոս՝ թաթարների արքան, կորեց-անցավ Եփրատն անհամբուխ զորախմբով՝ կազմված թաթարներից, պարսիկներից, վրացիներից և այլ ժողովուրդներից»: Տե՛ս **Ibn Wāṣil**, *Mufarriḡ al-kurūb*, ց. 6, §. 10: «Այլ ժողովուրդներ» ասվածի տակ մատենագիրը, ըստ էության, նկատի ունի նաև հայերին:

գրության մեջ (*Al-Muḥtaṣar fī [tārīḥ] al-duwal*)³⁴¹ այդ մասին կարդում ենք. «[Հիշրայի] 658 թ. Ասորիի իլխան Հուլադուն՝ 400 հազարանոց զորի ուղեկցությամբ պաշարեց Խառանն (*Harrān*) ու գրավեց այն «անվտանգության երաշխիքով» (*amān*)³⁴²... Ապա նա առաջ ընթացավ և Եփրատի վրա՝ Մալաթիա քաղաքի մոտ, կամուրջ անցկացնել տվեց, մեկ ուրիշը՝ Հոռմկայի մոտ, մյուսը՝ Կարկիսիայի (*Օսոյենե*), որոնց վրայով բանակներն անցան [գետն] ու մեծ սպանոց կազմակերպեցին Մանբիջում»³⁴³: Այս հաղորդումը կա նաև հեղինակի ասորերեն «Ժամանակագրության» մեջ, միայն թե նրանում հիշյալ բնակավայրերից բացի գետանց կամրջի անցկացման վայր է նշված նաև ալ-Բիրան³⁴⁴: Մոնղոլական ներխուժման ականատես բաղդադցի քրիստոնյա պատմիչ Իբն ալ-Ֆուլատիին (*մահ. 1323 թ.*) վերագրվող *Al-Ḥawādīt al-ġāmi'a* երկը հաստատում է ասորի մատենագրի վկայությունը. «Հետո սուլթանը (նկատի ունի Հուլադունի-Գ.Գ.) հրաման արձակեց երեք կամուրջ անցկացնել Եփրատի վրայով. մեկը՝ Մալաթիայի մոտ, մյուսը՝ ալ-Բիրայի, մեկ ուրիշը՝ Հոռմկայի, և իր անհաշվելի բանակով ուղղություն բռնեց դեպի ալ-Ջազիրա և գրավեց այն անվտանգության

³⁴¹ Այս երկրորդը, սակայն, պարզապես թարգմանություն չէ, այլ լրիվ ինֆնուրյոն աշխատություն, քանի որ ներառում է լրամշակված հատվածներ ու տեղեկություններ, որոնք տեղ չեն գտել ասորերեն բնագրում: Տե՛ս J.B. Segal, “Ibn al-‘Ibrī”, in *IE²*, vol. 3, p. 805: Հմմտ. I.C. Lawrence, On the Arabic chronicle of Bar Hebraeus. His aims and audience, *Parole de l'Orient: revue semestrielle des études syriaques et arabes chrétiennes: recherches orientales: revue d'études et de recherches sur les églises de langue syriaque*, XIX, 1994, pp. 319-378: Երկու երկերի համեմատական մեկ այլ ֆննդություն էլ տե՛ս D. Aigle, *The Mongol Empire between Myth and Reality: Studies in Anthropological History*, E.J. Brill, Leiden-Boston, 2014, pp. 66-88:

³⁴² *Amān*-ը կյանքի, անվտանգության, հաշտության, խաղաղության, հովանավորության խոստումն է, ապահովագիրը կամ երաշխիքը հնազանդության դիմաց: Ինստիտուտի մասին տե՛ս J. Schacht, “Amān”, in *IE²*, vol. 1, pp. 429-430, ինչպես նաև J. Wansbrough, “The Safe-Conduct in Muslim Chancery Practice”, *BSOAS*, vol. 34, № 1, 1971, pp. 20-35:

³⁴³ Ibn al-‘Ibrī, *Tārīḥ muḥtaṣar al-duwal, al-ṭab’a al-tāniya*, bi-taḥqīq Anṭūn Ṣāliḥānī al-Yasūī, Dār al-Rā’id al-Lubnānī, Bayrūt, 1994, §. 279.

³⁴⁴ *The Chronography of Gregory Abū'l-Faraj (Bar Hebraeus), the son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World*, vol. I, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932, reprinted by Gorgias Press, 2003, p. 435.

երաշխիփով (*amān*)»³⁴⁵: Ավելի ուշ շրջանի արաբագիր պատմիչներից գետնաց կամուրջների շինարարության մասին խոսում է նաև Իբն Քասիրը (մահ. 1373 թ.), թեև չի նշում, թե զբանք հատկապես որ բնակավայրերի մոտ են կառուցվել³⁴⁶: Ուշագրավ է, որ հայկական մի քանի աղբյուրների հավաստմամբ հայոց Կոստանդին կաթողիկոսը հանդիպել է Հուլադունին և օրհնել նրան: Վարդանը գրում է. «Յետքն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլաուն յաշխարհն Միշագետաց...: Եկն առ նա պատրիարքն Հայոց, կաթողիկոսն, օրհնեաց զնա և սիրեցաւ ի նմանէ»³⁴⁷:

Երևում է՝ Հռոմկլայի մատուցներում եփրատն անցնող մոնղոլական բանակը մեծ տպավորություն է թողել Հռոմկլայեցիների վրա: Դրա մասին են վկայում 1260 թ. Հռոմկլայում Թորոս Ռոսլինի վրձնով ծաղկված մի Ավետարանում մոգերի երկրպագության տեսարանում մի քանի մոնղոլների պատկերները և կողքին արված «թաթարն երեկ այսաւր» գրառումը³⁴⁸: Այդ ձեռագրի հիշատակարանում ասվում է. «...աւարտեցաւ մատեանս... ի բռնակալութեան մեծի իշխանին Մանկու կոչեցելոյ եւ տիեզերակալին Հողայունին՝ եղբաւ նորա, ի թագաւորութեան աստուածասէր եւ բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, եւ ի ժամանակի յորում առաւ հոչակաւորն Հալպ, և ամենայն փաղափ և ամուրֆ նորա»³⁴⁹:

Մոնղոլական զորքը Հալեպը պաշարեց հիշրայի 658 թ. Սաֆար ամսի 2-ին (1260 թ. հունվարի 18): Ինչպես վերևում ենք նշել, Հալեպն ու Դամասկոսն այդ ժամանակ պատկանում էին Այյուբյան ալ-Նասիր Յուսուֆին: «Եւ եկեալ եհաս ի վերայ Հալպայ, և պատեաց զնա

³⁴⁵ **Ibn al-Fuwaṭī**, *Al-Ḥawādīṭ al-ḡāmi'a wa-l-taḡārib al-nāfi'a fī al-mi'a al-sābi'a*, bi-tahqīq Maḥdī al-Naḡm, Dār al-kutub al-'ilmiyya, Bayrūt, 2002, ֆ. 243-244. Երկի ֆեղիմակոթյան վիճակոթյան մասին տե՛ս **F. Rosenthal**, “Ibn al-Fuwaṭī”, in *IEP*, vol. 3, p. 769.

³⁴⁶ **Ibn Kaṭīr**, *Al-Bidāya wa-l-nihāya*, ց. 17, bi-tahqīq ‘Abd Allāh ibn ‘Abd al-Muḥsin al-Turkī, Dār Haḡar, 1998, ֆ. 395.

³⁴⁷ **Վարդան Վարդապետ**, *Հաւաքումն*, էջ 151: Հմմտ. *Մանր ժամանակագրութուններ XIII-XVIII դդ.* (հետայսու՝ *ՄԺ*), կազմեց Վ.Ա. Հակոբյան, հտ. Բ, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1956, էջ 143, 176: Տե՛ս նաև **Cl. Mutafian**, *L'Arménie*, p. 146; **D. Bayarsaikhan**, *The Mongols*, p. 137: Էջ 143: Տե՛ս Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, *ձեռագիր № 251 (Ավետարան)*, քերթ 15ք, ինչպես նաև **Cl. Mutafian**, *L'Arménie*, p. 147:

³⁴⁹ *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (հետայսու՝ ՀԶՀ)*, ԺԳ դար, կազմեց Ա.Ս. Մաքեոյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 301:

շուրջանակի, - գրում է Սմբատ Սպարապետը՝ շարունակելով, - յղեաց և առ թագաւորն Հեթում գնալ առ իմֆն, և նա վաղվաղակի եհաս առ խանն գօրօֆ իւրով, և խանն ուրախութեամբ ընկալաւ գնա»³⁵⁰: Հուլաղուի գլխավորած բանակները, ինչպես իբն Վասիլն է վկայում, գործի դնելով 20 քարանետ մեքենա և պաշարողական այլ տեխնիկա³⁵¹, Հալեպի գրավումն ավարտին հասցրին Սաֆար ամսի 9-ին (հունվարի 26, օրը՝ կիրակի)³⁵²: Նույն Սաֆար ամսին մոնղոլները գրեթե առանց դիմադրութեան տիրացան նաև Դամասկոսին: Բանն այն է, որ Դամասկոսի Այյուբյան սուլթանն ալ-Նասիր Յուսուֆը, մոնղոլների հաղթական առաջընթացի և Հալեպի առման լուրն առնելով, գերադասեց փախուստի դիմել՝ քաղաքը թողնելով բախտի քամահաճույքին³⁵³: Արյունահեղութիւնից խուսափելու համար Դամասկոսի մեծամեծները վճռեցին քաղաքն «անվտանգության երաշխիքով» (*amān*) հանձնել Հուլաղուին: «...Իսեանց կամաւ ետուն գփաղաֆն եւ բանալի փաղաֆին 'ի ձեռս Հուլաւու Դանին», - կարգում ենք Գրիգոր Ակնեբեցուն վերագրվող երկում³⁵⁴: Այս իրադարձութեամբ ավարտվեց վերջին Այյուբյան տիրակալի իշխանութիւնն Ասորիքում³⁵⁵:

Դպտի ալ-Մաքին իբն ալ-Ամիդը պատմում է, որ մոնղոլները սրի քաշեցին Հալեպի բնակչութեան մեծ մասին, և «նույնիսկ ասում էին, որ Բաղդադում և Պարսկաստանի և ոչ մի փաղաֆում այդքան մառդ չէին կոտորել,

³⁵⁰ Սմբատայ Սպարապետի *Տարեգիրք*, աշխատասիրութեամբ Հ. Սերովբէ Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 235:

³⁵¹ Ibn Wāṣil, *Mufarriḡ al-kurūb*, ց. 6, թ. 197. Հմմտ. Ibn al-ʿIbrī, *Muḥtaṣar*, թ. 487, ինչպես նաև նույնի՝ *Chronography*, pp. 435-436.

³⁵² Տե՛ս Ibn Wāṣil, *Mufarriḡ al-kurūb*, ց. 6, թ. 197; Abū al-Fidāʾ, *Al-Muḥtaṣar*, ց. 2, թ. 309-310: Հմմտ. al-Maqrīzī, *Al-Sulūk*, ց. 1.2, թ. 422: Տե՛ս նաև ներքևում:

³⁵³ Abū Šāma, *Tarāḡim*, թ. 203: Տե՛ս նաև R.S. Humphreys, *From Saladin to the Mongols*, p. 351; P. Jackson, "The Crisis in the Holy Land in 1260", *EHR*, vol. 95, № 376, 1980, p. 490:

³⁵⁴ Տե՛ս Գրիգոր Ակնեբցի, *Պատմութիւն թաթարաց*, էջ 49, ինչպես նաև R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 348:

³⁵⁵ Ibn al-ʿAmīd, *Al-Mağmūʾ al-mubārak*, թ. 50. Հալեպին տիրելուց հետո մոնղոլները փաղաֆի բերդերից ազատ արձակեցին մի խումբ Բահրի մամլուֆների և իրենց հետ Իրան տարան: Տե՛ս al-Maqrīzī, *Al-Sulūk*, ց. 1.2, թ. 427: Նրանց թվում էր Սունկուր ալ-Աշկար անունով մեկը, ով աւարիներ անց կարևոր «գեր» պիտի ունենար հայ-մամլուֆյան փաղաֆական հարաբերություններում, որոնց կանոնադառնանք ներկում է 3.1 մասում:

ինչհան որ Հալեպում: Ճանապարհներն ու շուկաները դիակներով լցվեցին, և թաթարների զորերը ստիպված էին իրենց ձիերով նրանց վրայով անցնել, քանզի չէր գտնվում մի ազատ տեղ, որտեղ դիակ չլիներ»³⁵⁶: «Հալեպի միջնաբերդը դիմադրություն ցույց տվեց, - գրում է ալ-Մակրիզին, - և Հուլադուն այն պաշարման մեջ պահեց այնքան ժամանակ, մինչև որ գրավեց Սաֆար ամսի 10-ին: Նա ավերածության մատնեց այն, քանզի բոլոր պարսիսպները, ինչպես նաև մզկիթներն ու այգիները, և քաղաքն ամայացավ»³⁵⁷: *Իսկ Իբն Բասիրի բնորոշմամբ՝ Հուլադուն հարձակումից հետո* «Հալեպն ասես վերածվեց մի բորոտ ավանակի»³⁵⁸:

Հալեպում մոռոզովական ներխուժմանն ակնհայտ եղած Բար Հեբրեոսը նույնպես ընդունում է, որ Հալեպի սպանդն ավելի սաստիկ էր, քան Բաղդադինը: Հակոբիկները մաֆրիանը պատմում է, որ չնայած ինքը գնացել է իր հնազանդությունը հայտնելու Հուլադունին, բանտարկվել է Կալաաթ ալ-Նաջմում (Ջիսր Մանբիջ-Գ.Դ.): Ըստ նրա՝ քաղաքի ասորի բնակչությունը, առանց իր հովվապետի մնալով, նույնպես կոտորածի և գերեվարության է ենթարկվել: Բար Հեբրեոսը շարունակում է, որ ասորիների մի մասը կոտորածից փրկվել է ի շնորհիվ Թորոս անունով մի քահանայի, ով հայոց Կոստանդին կաթողիկոսի եղբայրն էր, և Գևորգ (Kürāk) անունով մի վանականի, ովքեր գնացել են թաթարների մոտ և ազատելով ողջ մնացածներին՝ առաջնորդել ասորական եկեղեցի:³⁵⁹:

Աղբյուրների հաղորդմամբ երկու քաղաքների գրավման իրենց մասնակցությունն են բերել նաև Հայոց արքա Հեթումն ու Անտիոքի իշխան Բոհեմունդը: Վարդանը գրում է, որ «...ընդ նմա էր ի յառնույն զամենայն աշխարհն Շամայ՝ և մեր պսակավորն Հեթում, ազատելով ի մահուանէ գրիստոնեայսն յեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով»³⁶⁰: Ինչ վերաբերում է արաբագիր պատմիչներին, ապա

³⁵⁶ Ibn al-‘Amīd, *Al-Mağmū‘ al-mubārak*, §. 49.

³⁵⁷ Al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 422.

³⁵⁸ Ibn Kaṭīr, *Al-Bidāya*, §. 17, §. 396.

³⁵⁹ Bar Hebraeus, *Chronography*, p. 436. Հմմտ. Ռույնի Muḥtaṣar, §. 487.

³⁶⁰ Վարդան Վարդապետ, *Հաւաքումն*, էջ 151: Հմմտ. Ստեփաննոս Օրբելեան, *Պատմութիւն*, հտ. Բ, էջ 148-149:

նրանցից ոմանք Հայոց և Անտիոքի տիրակալներին հիշյալ քաղաք-ներում գործված զարհուրելի արարքներ են վերագրում: Իբն ալ-Ամիրի վկայությամբ՝ Հալեպում գերության քշվեց 100 հազարից ավելի մարդ, որոնց մեծ մասին վաճառեցին «ֆրանկների երկրում և հայերի երկրում և կամ տեղափոխեցին Միջերկրական ծովի կղզիներ»³⁶¹: Բայբարս ալ-Մանսուրին, ալ-Նուվայրին և Իբն ալ-Ֆուրատը նույնպես գրում են, որ գերիներին վաճառեցին ֆրանկներին և հայերին³⁶²: Իսկ Իզզ ալ-Դին իբն Շադդադը վկայում է. «Երբ անիժյալ թաթարները 658 թ. Սաֆար ամսի 11-ին գրավեցին Հալեպ քաղաքը, Սսի տերը մտավ [Հալեպի] մզկիթ և մեծ թվով մարդկանց սրի փաշեց: Նա հրկիզեց նրա առջևի պատը, և կրակը տարածվեց դեպի արևմուտք ու հարավ՝ դեպի *al-Ḥalāwīyya* դպրոցը, սպա հրկիզվեց նաև կոտրավաճառների շուկան³⁶³: Երբ [Հալեպի] կառավարիչ] Իմադ ալ-Դին ալ-Կազվինին Հովաղոսին հայտնեց, թե ինչեր են արել սսեցիները՝ մասնավորապես մզկիթն այրելու և փրստոնյանների եկեղեցիներին ձեռք չտալու մասին, վերջինս հրամայեց վերջ տալ դրան և մարել կրակը: Նա սպանել տվեց մի խումբ սսեցիների: Եվ չնայած կրակը մարել չհաջողվեց, Ալլահը տեղատարափ անձրև ուղարկեց և հանգցրեց այն»³⁶⁴:

Մոնղոլական զորքերը Քիթբուղա զորավարի գլխավորությամբ Դամասկոս շարժվեցին 658 թ. Ռաբի առաջին ամսի (1260 թ. մարտ) կեսերին, բայց քաղաքի միջնաբերդը, հակառակ վերոհիշյալ պայմանավորվածության, հրաժարվեց հնազանդվել մոնղոլներին: Բայց երբ գործի դրվեցին 20-ից ավելի բաբանները, միջնաբերդում պաշարվածները նույնպես ստիպված եղան անձնատուր լինել՝ ենթարկվելով

³⁶¹ Տե՛ս **Ibn al-ʿAmīd**, *Al-Mağmūʿ al-mubārak*, ֆ. 49: Հմմտ. **al-Maqrīzī**, *al-Sulūk*, ց. 1.2, ֆ. 422:

³⁶² **Baybars al-Manṣūrī**, *Zubda*, ֆ. 48; **al-Nuwayrī**, *Nihāya*, ց. 27, ֆ. 261; **Ibn al-Furāt**, *Tārīḥ al-duwal (Selections)*, vol. 2, p. 41.

³⁶³ Կանարը նույնպես մեջբերում է Իբն Շադդադին, բայց տարօրինակ կերպով հենց այս տեղում կանգ է առնում՝ չբարգմանելով հաղորդման վերջին կարևոր մասը: Տե՛ս **M. Canard**, “*Le Royaume*”, p. 219-220, n. 10:

³⁶⁴ Տե՛ս **ʿIzz al-Dīn ibn ʿAddād**, *Al-Aʿlāq al-ḥaṭīra*, ց. 1.1, ֆ. 116: Ժե դարի պատմիչ Իբն ալ-Շիհնան (մահ. 1485 թ.) նույնությամբ կրկնում է Իբն Շադդադին: Հմմտ. **Ibn al-Šihna**, *Al-Durr al-muntaḥab fī tāriḥ mamlakat Ḥalab, bi-taḥqīq ʿAbd Allāh Muḥammad Darwīš*, *Dār al-kitāb al-ʿarabī*, Dimašq, 1984, ֆ. 68-69:

անողոք կոտորածի և թալանի³⁶⁵։ Հետաքրքիր է, որ «Գործի կիպրաց-վոց»-ի վկայությունամբ՝ մոնղոլական զորքերի հրամանատար Քիթբուղային Դամասկոս են ուղեկցել Հայոց արքան և Անտիոքի իշխանը։ Ըստ աղբյուրի՝ քրիստոնյա միապետերն այստեղ նույնպես մզկիթներ են քանդել, դրանք ախոռների են վերածել, գինի են ցողել և խոզի միս քսել պատերին, իսկ մեկն անգամ փորձել են եկեղեցու վերածել՝ պատճառաբանելով, որ այն ժամանակին հունական եկեղեցի է եղել, և որ մուսուլմաններն իրենք են այն մզկիթ դարձրել³⁶⁶։ Արդի հետազոտողները, ինչպես օրինակ, Ջեքսոնը և, նրան հետևելով, նաև Ամիտայը, հակված չեն հավատ ընծայելու այս հաղորդմանը։ Մասնավորապես ըստ Ամիտայի՝ հաղորդումը չպետք է բառացի հասկանալ։ Հնարավոր է՝ մոնղոլ պաշտոնյաների (այդ թվում հենց Հուլաղուի զորավար Քիթբուղայի, ով նեստորական էր)՝ քրիստոնեաների նկատմամբ տածած համակրանքը պատճառ եղած լինի Հեթումի և Բոհեմոնդի մասին հյուսված այսօրինակ պատմությունների³⁶⁷։ «Գործի կիպրաց-վոց»-ի հաղորդմանը հակառակ՝ մուսուլման հեղինակների մոտ, ի տարբերություն Հալեպի դեպքերի, Հայոց արքային կամ Բոհեմոնդին ուղղված անմիջական մեղադրանքներ չկան։ Այնուամենայնիվ, նրանք նույնպես խոսում են քաղաքի գրավումից հետո քրիստոնեաների և մուսուլմանների միջև եղած բախումների մասին։ Արաբ պատմագիրների վկայությամբ՝ Դամասկոսի գրավումից հետո քրիստոնյաները քաղաքի մոնղոլ վերակացու-կառավարիչների (šihna, nā'ib)՝ մասնավորապես քրիստոնյա Իլ-Սիբանի (այլուր՝ Իլ-Շիբան, մեկ այլ տեղում՝ Իլբան) թողտվությամբ ճնշում էին մուսուլմաններին։ Քաջալերվելով այն փաստից, որ վերջինս իրենց եկեղեցիներն է հաճախում, նրանք բարձրաձայն իրենց կրոնն էին գովաբանում և անվանարկում իսլամը, գինի էին խմում, այն ցողում մարդկանց և անգամ մզկիթների դռների վրա, հնչեցնում էին իրենց եկեղեցիների զանգերը և այլն։ Երբ մուսուլմանները քրիստոնյաների գործած արարքների մասին բողոքել են Իլ-Սիբանին (այլուր՝ Քիթբուղային), նրանց ձեռնով և

³⁶⁵ Abū Šāma, Tarāġim, §. 204; Ibn al-ʿAmīd, Al-Maġmūʿ al-mubārak, §. 52.

³⁶⁶ Les gestes des Chiprois, p. 161-162, ինչպես նաև Deeds of the Cypriots, pp. 34-35.

³⁶⁷ P. Jackson, “Crisis”, p. 486; R. Amitai-Preiss, Mongols, p. 31.

նվաստացումներով դուրս են հանել միջնաբերդից: Սակայն, երբ մոնղոլները 1260 թ. սեպտեմբերին ստիպված են եղել թողնել Դամասկոսն ու հեռանալ, մուսուլմանները դաժան հաշվեհարդար են տեսել քաղաքի քրիստոնյաների հետ նրանց գործած արարքների համար՝ ծեծի ենթարկել, այրել նրանց տներն ու եկեղեցիները (Kanīsat Maryam, այն է՝ [Սբ.] Մարիամ եկեղեցին)³⁶⁸:

Մոնղոլները մեկը մյուսի հետևից տիրացան Ասորիքի մյուս մեծ ու փոքր բնակավայրերին³⁶⁹: Ռաշիդ ալ-Դինը վկայում է, որ երբ մոնղոլները գրավեցին Հարիմ ամրոցը, նրա բոլոր բնակիչներին՝ անգամ կանանց և ծծկեր երեխաներին սրի քաշեցին. փրկվեց միայն հայազգի մի ոսկերիչ³⁷⁰: Բար Հեբրեոսը նույնպես պատմում է Հարիմի արյունալի առման մասին, միայն թե գրում է, որ միակ փրկվածը մի հայ դարբին էր³⁷¹:

³⁶⁸ Տե՛ս Ibn al-‘Amīd, *Al-Mağmū‘ al-mubārak*, §. 53; Abū Šāma, *Taraḡīm*, §. 208; al-Yūnīnī, *Dayl* (Ḥaydārābad), §. 1, §. 362-363; al-Dahabī, *Tārīḥ al-Islām*, §. 48, §. 59-60; Ibn Kaṭīr, *Al-Bidāya*, §. 17, §. 397-399; Abū al-Fidā’, *Al-Muḥtaṣar*, §. 2, §. 314: Ուշագրավ է, որ ալ-Վասիտին Իլ-Սիբամին անվանում է Հուլադուի մուսաբոյ որդի (ibn ḥālāt Hūlākū): Տե՛ս Ibn al-Wāsiṭī, *Radd*, §. 73-74:

³⁶⁹ Արաբական մի քանի աղբյուրներ, ինչպես օրինակ Իբն Վասիլը, հաղորդում են, որ մոնղոլական որոշ զորավարներ մինչև երուսաղեմ են հասել: Տե՛ս Ibn Wāṣil, *Mufarriḡ al-kurūb*, §. 6, §. 201: Անգամ այս դեպքում ճշմարտությունից հեռու է Ակներցու այն հաղորդումը, թե Հուլադուն «գնաց ի վերայ երուսաղեմ քաղաքին եւ էառ զնա. եւ ինքն մտաւ ի սուրբ Յարուսիւնն, եւ երկիր եպագ սրբոյ Գերեզմանին. եւ թողեալ զգարքն ի տեղն, եւ ինքն դարձաւ խաղաղութամբ յաշխարհն արեւելից»: Տե՛ս Գրիգոր Ակներցի, *Պատմութիւն թաթարաց*, էջ 50; R.P. Blake, R.N. Frye, “History of the Nation”, p. 348: Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 236: Հմմտ. R. Amitai, “Mongol raids into Palestine (A.D. 1260 and 1300)”, *JRAS*, № 2, 1987, pp. 237-238: Գլյոմ Տյուրացու երկի հին ֆրանսերեն քարգամնության մի անանուն շարունակով էլ գրում է, որ քաթարները «մտել են երուսաղեմի թագավորություն և գրավել Սիդոն քաղաքը»: Տե՛ս J. Shirley, *Crusader Syria in the Thirteenth Century: The Rothelin Continuation of the History of William of Tyre with part of the Eracles or Acre text*, Routledge, London-New York, 2016 (առաջին ֆրստ.՝ Aldershot, Ashgate, 1999), p. 141:

³⁷⁰ Տե՛ս Rašīd al-Dīn, *Ġāmi‘ al-Tawārīḥ*, §. 2, be-kūšē-e Bahmān Karīmī, Eqbāl, Tehrān, 1960, §. 719-720, ինչպես նաև Рашид-ад-Дин, *Сборник летописей*, том III, пер. с перс. А.К. Арендса, под ред. А.А. Ромаскевича, изд. АН СССР, Москва-Ленинград, 1946, стр. 50:

³⁷¹ Bar Hebraeus, *Chronography*, p. 436.

Սակայն մոռնալով Մեծ Խան Մանգուի հանկարծահաս մահվան ու Կարակորումում նոր խանի գահակալման շուրջ ծագած վեճերի լուրն ընդմիջեց մոռնալական զորքերի հետագա առաջխաղացումը: Հուլիս-դեկտեմբեր, իր հետ վերցնելով մոռնալական զորքերի մեծ մասը, հետ քաշվեց Իրան՝ Կարակորում մեկնելու մտադրությամբ³⁷²: Իբն ալ-Դավադարիի վկայությամբ՝ իլխանը զորքերի մնացյալ մասն³⁷³ ու նորանվաճ տարածքների պահպանությունը վստահեց Քիթբուղա անունով իր գորավարին՝ նրան նշանակելով Հալեպի փոխարքա (nā'ib), իսկ Դամասկոսում փոխարքա կարգեց Բայդար[ա] անունով մեկ այլ գորավարի³⁷⁴:

Հուլիսի անակնկալ նահանջը վտանգավոր իրավիճակ ստեղծեց Կիլիկյան Հայաստանի համար: Մոռնալների հետ հաստատած դաշնակցությունը հնարավորություն տվեց Հայոց արքային տարածքային ձեռքբերումներ ունենալ³⁷⁵, և տիրանալ այն հողերին, որոնք մի ժամանակ Գող Վասիլին էին պատկանել³⁷⁶: Ըստ Հեթում արքայորդու «Ճաշոց»-ի (1286 թ.) հիշատակարանի՝ «... նա (Հեթումը-Գ.Դ.) ալգմուքեամբն Աստուծոյ եւ ձեռնառութեամբ Մուղալ զաւրում էառ զմեծն Գերմանիկէ (Մարաշը-Գ.Դ.) եւ զՊեհեսնի»³⁷⁷:

³⁷² Ibn Duqmaq, Nuzhat al-anām, §. 260.

³⁷³ Աղբյուրներ տարակարծիք են Քիթբուղայի տրամադրության տակ թողնված գոբի բվաֆանակի վերաբերյալ: Տե՛ս R. Amitai-Preiss, *Mongols*, p. 27:

³⁷⁴ Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, §. 8, §. 49; al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 427. Հմտ. R. Amitai-Preiss, *Mongols*, p. 27, n. 10.

³⁷⁵ Մրան նվիրված առանձին հոդված ունենի: Տե՛ս Գ. Դանիելյան, Վ. Տեր-Ղևոնդյան (համահեղինակ), «Կիլիկյան Հայաստանի տարածքային ձեռքբերումները Հուլիսի 1260 թ. ասորիյան արշավանքից հետո», *Էյմիածին*, 2017, Ա, էջ 59-64:

³⁷⁶ Cl. Cahen, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Geuthner, Paris, 1940, p. 705; S. Der-Nersessian, *The Kingdom of Cilician Armenia*, in *A History of the Crusades*, vol. II: *The Later Crusades 1189-1311*, gen. ed. K.M. Setton, The University of Wisconsin Press, 1969, p. 653; M. Canard, “Le Royaume”, p. 222:

³⁷⁷ Տե՛ս Մատենադարանի ձեռ. № 979 («Հեթում Բ արքայի ճաշոցը»), րերթ 475ա, ինչպես նաև 222, ԺԳ դար, էջ 587: Հմտ. Մամուլեի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յառաջ եւ ծանօթ. Արշակ Տեր-Միքիլեանի, Վաղարշապատ, Ա. Էյմիածնի տպարան, 1892, էջ 221 (շարունակող); Hayton, *La flor*, p. 171: Հմտ. Վահրամայ Բաբունույ Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբ Կարապետ Վարդապետ

Ըստ Իբն ալ-Շիհնայի՝ Հիջրայի 656-ին (1258 թ.) Մարաշը գտնվում էր Իմադ ալ-Դին անուհով մի կառավարչի ձեռքում, ում ընտանիքը քաղաքին տիրում էր արդեն 50 տարուց ավելի: Պատմիչը չարունակում է, որ «Իմադ ալ-Դինն աղաջիւնների (աղաշ-երի)³⁷⁸ և հայերի հարձակումների հաճախացման պատճառով այլևս անկարող էր պահել այն: Նա նախկին գրեց Ռումի տեր Իզզ ալ-Դին Քայկավուսին՝ բերդը նրան հանձնելու մտադրությամբ, բայց վերջինս հրաժարվեց: Գրեց նաև Ասորիքի տեր ալ-Մալիք ալ-Նասիր Սալան ալ-Դինին, բայց վերջինս նույնպես հրաժարվեց ընդունել բերդը: Եվ երբ նրա վիճակը բարդացավ, [ստիպված] թողեց այն և հեռացավ, որից հետո նրան տիրեցին հայերը»³⁷⁹:

Այն մասին, որ Հուլաղուի ասորիքյան արշավանքի արդյունքում Հեթումը տիրացել է Բեհեսնային կամ Բեհեսնիին, արաբագիր հեղինակները նույնպես հաղորդում են, միայն թե դեպքն իրարից դուրսն էին՝ տարբերվող պատումներով են ներկայացնում: Ըստ Իզզ ալ-Դին իբն Շադդադի՝ մինչև մոնղոլների արշավանքը Բեհեսնին Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի տիրույթներից էր: Եվ երբ գրոհել էին Ասորիքը, փորձել են գրավել այն, բայց տեսնելով, որ պաշարումը երկարում է, թողել են այն և առաջ ընթացել Հալեպի ուղղությամբ: Հալեպի առումից հետո մոնղոլները կրկին վերադարձել և վերսկսել են

Շահնագաբեանց, Փարիզ, 1859, էջ 220: Այս մասին տե՛ս նաև **R. Grousset**, *The Empire of the Steppes*, tr. from French by Naomi Walford, Rutgers University Press, New Brunswick, New Jersey, 1970, p. 362; **Cl. Cahen**, *La Syrie*, p. 705; **Г.Г. Микаелян**, *История Киликийского Армянского государства*, изд. АН АССР, Ереван, 1952, стр. 333; **Cl. Mutafian**, *L'Arménie*, p. 149; **A. Stewart**, *Kingdom*, pp. 46-47, n. 10: Այս արշավանքի արդյունքում հայոց թագավորության հսկողության տակ անցած այլ բերդերի մասին տե՛ս նաև ներևում՝ 3.1 մասում:

³⁷⁸ Բնագրում՝ *‘ağāğiriyya* (բառացի՝ «անտառի մարդիկ», «ծառերի մարդիկ»): Աղաշ-երիները քյուր-օղուզական ցեղախմբեր էին, որ սվոբություն ունեին անտառներում բնակվել: Տե՛ս **Рашид-ад-Дин**, *Сборник летописей*, том I, книга I, пер. с персидского Л.А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, изд. АН СССР, Москва-Ленинград, 1952, стр. 85:

³⁷⁹ Տե՛ս **Ibn al-Šihna**, *Al-Durr al-muntaḥab*, §. 192: Իբն Բիբին նույնպես գրում է Մարաշի վրա աղաշ-երիների հաճախակի հարձակումների մասին, որոնք ըստ նրա «ճանապարհների և քարավանների էին կտրում, հրոստում Ռումի երկրի, Ասորիքի և հայերի վրա»: Տե՛ս *Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides* par M. Th. Houtsma, vol. III, *Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjournāmeḥ d'Ibn-Bībī*, E.J. Brill, Leide, 1902, §. 284 (հետալսում՝ **Ibn-Bībī**, **Muḥtaṣar**): Հմմտ. **Cl. Cahen**, *La Turquie*, p. 240-241:

պաշարումն առավել մեծ ուժով և ի վերջո գրավել: Բայց նրա բնակ-
չութիւնը հրաժարվել է լինել «Սսի տիրոջ» հպատակութեան տակ,
ուստի այնտեղ մուսուլման կառավարիչ է նշանակվել: Բայց որոշ ժա-
մանակ անց բերդի բնակիչները, իրենց անվտանգ չզգալով, ի վերջո
ստիպված են եղել բերդը հանձնել հայերին³⁸⁰:

Իբն Շադդադի պատումին հակառակ՝ ալ-Ջազարի պատմիչը հիշ-
րայի 692 (1293) թվականի իրադարձութիւնների շարադրանքում,
երբ խոսում է Սսի երկրի հետ կնքված հաշտութեան արդյունքում
մամուլքներին հանձնված բերդերի (Բեհեսնի, Մարաշ, Թել Համդուն)
մասին, գրում է. «[Բեհեսնան] Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիր Սալան
ալ-Դին Յուսուֆի ժամանակներում որպէս իր երկրի տիրոջներից մեկը
գտնվում էր նրա կառավարիչների ձեռքում: Երբ թաթարները Հալեպ եկան և
տիրացան նրան, այնտեղի (Բեհեսնայի) կառավարիչն էր Էմիր Սայֆ ալ-Դին
ալ-Ակրաբը, ով վաճառեց այն Սսի տիրոջը հարյուր հազար դիրհամի դիմաց:
Վերջինս նրան տվեց վաթսուն հազար դիրհամ և վերցրեց բերդը, որ ցայժմ
նրանց ձեռքին էր և մեծ տառապանք էր պատճառում մուսուլմաններին»³⁸¹:
Այս պատմութիւնը վերապատմում է նաև ալ-Ջահաբին, միայն թե
գրում է, որ բերդը 100 հզ. դիրհամով «Սսի տիրոջ» համար գնել է Հու-
լադուն, որից հետո Հեթումն իր հնազանդութիւնն է հայտնել
նրան³⁸²: Բերդին տիրելու միջոց պատմիչներից տարբերվող մեկ այլ
պատմութիւն է տալիս ալ-Այնին: Նա մասնավորապէս գրում է. «Այն
[նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, պատկանում էր մուսուլման-
ներին, և նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիրն էր: Այդպէս էր,
քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ և գրավել բոլոր երկրները: Երբ թաթ-
արը՝ Սսի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպէս] գրավել է, նրա մոտ

³⁸⁰ 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-A'lāq al-ḥaṭīra*, ց. 1.2, ց. 118-119.

³⁸¹ Št'ū al-Ġazarī, *Tārīḥ Ḥawādīt al-zamān*, ց. 1, 1999, ց. 149: Հմմտ. al-Dahabī, *Al-Muḥtār min tārīḥ ibn al-Ġazarī*, bi-taḥqīq Ḥaḍīr 'Abbās Muḥammad Ḥalīfat al-Munšadāwī, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1988, ց. 358; Mufaḍḍal ibn Abī al-Fadā'il, *Al-Nahḡ al-sadīd* (PO, t. 14), ց. 558 [p. 394]; al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, ց. 31, ց. 157; Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, ց. 8, ց. 341; Ibn al-Furāt, *Tārīḥ al-Islām*, ց. 52, ց. 22, ինչպէս նաև Թուֆիլ Duwal al-Islām, ց. 2, ց. 218: Հմմտ. Ibn Taḡrī Birdī, *Al-Manhal al-ṣāfi*, ց. 5, bi-taḥqīq Muḥammad Muḥammad 'Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-'Āmma li-l-Kitāb, al-Qāhira, ց. 275:

³⁸² Št'ū al-Dahabī, *Tārīḥ al-Islām*, ց. 52, ց. 22, ինչպէս նաև Թուֆիլ Duwal al-Islām, ց. 2, ց. 218: Հմմտ. Ibn Taḡrī Birdī, *Al-Manhal al-ṣāfi*, ց. 5, bi-taḥqīq Muḥammad Muḥammad 'Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-'Āmma li-l-Kitāb, al-Qāhira, ց. 275:

գնաց և նվերներով շողոփորթեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բենեսանան իրենը լինի, և նա էլ հանձնեց նրան»³⁸³։

1262 թ. Թորոս Ռոսլինի ձեռքով գրված մի ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հեթումը, ձևավորված քաղաքական պատշաճ պայմաններն օգտագործելով, մի շարք բերդեր է խլել նաև Ռումի սուլթանությունից։ «Այլև բարեպաշտութեամբն իւրով յԱստուած գորացեալ հէրհէր զհոյս հաւարածին ծննդոցն և անաւրինաց սեռիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, և առեալ զամուրս նորա՝ զանմատչելին Մումտաս, և զՄանիանն, զըՍիկի և զայլս բազում գոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջէ։ Որ և յասմ ամի առ նա և զամուր դղեակն զհոյակապ և զյագանատրն Պենեսանի, որ ար Ի և Ե (25) էր ամսեանն հոգտեմբերի»³⁸⁴։ Ստացվում է՝ Բենեսանին գրավվել է 1262 թ. հոկտեմբերի 25-ին։

Մարաշից և Բենեսանիից բացի Հայոց թագավորությանն են անցել նաև Ռաբանը, Քեսուռը, Դարպսակը, Մարզուբանը (Մարզաբան), Շիհ ալ-Հադիդը³⁸⁵։ Ըստ Իզզ ալ-Դին իբն Շադդադի ևս մեկ բերդ՝ Բուրջ ալ-Ռասասարը, մինչև թաթարների արշավանքը գտնվում էր «Նասիրյան պետության» (իմա՝ Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի պետություն) կազմում։ Ասորիքի գրավման ժամանակ այն ավերվել է, և նրան հարակից մի շարք գյուղեր անցել են հայերի ձեռքը³⁸⁶։

Այս նվաճումներով Հայոց թագավորության սահմաններն ընդարձակվեցին ընդհուպ մինչև Եփրատ գետը։ Հայոց հայրապետական աթոռը՝ Հռոմկլան, ըստ այդմ առաջին անգամ աշխարհագրորեն միացավ Կիլիկիո հայոց թագավորությանը³⁸⁷։

³⁸³ Al-ʿAynī, *ʿIqd-MMA*, ց. 3, ց. 151-152.

³⁸⁴ Տե՛ս 222, ԺԳ դար, էջ 317։ Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 234-235 (պատմում է Մունդաս բերդի գրավման հանգամանքների մասին)։ ՄԺ, հտ. Ա, էջ 82; նույնի՝ հտ. Բ, Երևան, 1956, էջ 71 և Կ. Մաքևոսյան, *Հեթում Պատմիչ Կողիկոսցին* և նրա ժամանակագրությունը, «Մուլնի» հրատ., 2011, էջ 53, ինչպես նաև Սամուկ Անեցի և շարունակողներ, *Ժամանակագրություն*, աշխատասիրությամբ Կ. Մաքևոսյանի, «Նաիրի», Երևան, 2014, էջ 251։

³⁸⁵ Տե՛ս ʿIzz al-Dīn ibn Šaddād, *Al-Aʿlāq al-ḥaṭīra*, ց. 1.2, ց. 115, 421, 434 և հմմտ. *Ibn al-Šihna*, *Al-Durr al-muntahab*, ց. 171, 223, 226.

³⁸⁶ ʿIzz al-Dīn ibn Šaddād, *Al-Aʿlāq al-ḥaṭīra*, ց. 1.2, ց. 103.

³⁸⁷ K. Raphael, *Muslim Fortresses in the Levant: Between Crusaders and Mongols*, Routledge, London & New York, 2011, p. 186.

Այնուամենայնիվ, Հուլաղուի նահանջից հետո նույն այդ հայ-մոնղոլական դաշնակցությունը մեկընդմիջտ սեպ դարձավ հայ-մամլուլքյան հարաբերություններում և վերահաս սպառնալիք հայոց թագավորության համար: Ալ-Ումարին, թեև այս դեպքերից 70-80 տարի անց է գրում, այնուամենայնիվ, հայ-մոնղոլական դաշնակցության պատճառով հայերին հայտարարում է. «Իսլամի ամենավտանգավոր թշնամիներ» (ahbat ʿudwin li-l-Islām)³⁸⁸, որոնց վրա «Հուլաղույան տան (հարստության) արհամները մեծ ուժ և ազդեցություն ունեին, մինչև որ նվաղեց նրանց ուժը, թուլացավ դաժանությունը, նրանց (հայերի) անտառը դատարկվեց նրանց առյուծներից»³⁸⁹:

Չնայած լուրջ ռազմական նախաձեռնություններ չձեռնարկելու Հուլաղուի հորդորներին՝ Քիթբուղան շուտով որոշեց շարունակել արշավանքը դեպի Եգիպտոս: Սմբատ Սպարապետն այդ մասին գրում է. «Խսկ բիւրապետն Քիթպուղա ոչ եկաց ի պատուէր խանին ուր եղ գնա կեալ ի տեղի իւր, այլ ժողովեաց զօրս, և յերկրէն կիլիկեցոց արս են (500) յղեալ էառ ի թագաւորէն, և դէմ եղեալ գնայր մտանել յեգիպտոս»³⁹⁰: Սակայն մոնղոլական բանակի մեծագույն մասի ընկերկումը Կուտուզի համար հնարավորություն էր՝ մամլուլքներին հանելու անակնկալություն այն թմբիրից, որ մինչ այդ անպարտելի համարվող մոնղոլների հաղթարշավն էր հարուցել, և շրջադարձ մտցնել դեպքերի հետագա ընթացքում: Նախահարձակ լինելով՝ Կուտուզը 658 թ. Ռամադան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3) Այն Ջալուտի («Գողիարթի աղբյուր») մոտ ջախջախիչ պարտության մատնեց մոնղոլներին³⁹¹: Մոնղոլ զորապետ Քիթբուղան սպանվեց մարտում, իսկ նրա կինն ու որդիները, ինչպես Սմբատն է շարունակում, գերի տարվեցին Եգիպտոս³⁹²: Եթե հաշվի առնենք Սմբատի վկայությունը ճակատամարտին Հեթումի

³⁸⁸ Al-ʿUmārī, Al-Taʾrīf, §. 55.

³⁸⁹ Նույն տեղում:

³⁹⁰ Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 236:

³⁹¹ Հակատամարտի մասին մանրամասն տե՛ս F.H.M. ʿĀšūr, Al-Ġihād, §. 111-127 և S.A. F. ʿĀšūr, Al-ʿAsr al-Mamālīkī, §. 32-36; J.M. Smith, “Ayn Jālūt: Mamlūk Success or Mongol Failure?”, *HJAS*, vol. 44, № 2, 1984, pp. 307-345; R. Amitai-Preiss, *Mongols*, pp. 39-48; Š.R. Huğğa, Al-Ālāqāt, §. 104-117:

³⁹² Սմբատ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 236: Հմմտ. Ibn al-ʿAmīd, Al-Mağmūʿ al-mubārak, §. 53:

ուղարկած 500 ռազմիկների մասնակցությամբ մասին³⁹³, ապա կարող ենք ընդունել, որ այն նաև Հայ-մամլուքյան առաջին անմիջական բախումն էր³⁹⁴, որն առաջիկա տարիներին պիտի վերաճեր լուրջ դիմակայության ու հակամարտության:

Չնայած տարած տպավորիչ հաղթանակին՝ Կոստուզը նույնպես չհասցրեց վայելել իր տարած հաղթանակի պտուղները, քանզի Բայբարսի և նրա համախոհների դավադրության զոհ դարձավ: Վերջինս Սուլթանության գահին բազմեց ալ-Մալիք ալ-Ջահիր (1260-1277 թթ.) անունով³⁹⁵: Հենց նրան էր վիճակված մամլուքյան դրոշի տակ համախմբելու Եգիպտոսն ու Ասորիքը, հաջողությամբ դիմագրավելու Իլխանությանից և նրա ճամբարում գտնվող այլ ուժերից՝ մասնավորապես Կիլիկյան Հայաստանից եկող սպառնալիքին և սկսելու Ասորիքն ու Պաղեստինը խաչակրաց կազմավորումներից վերջնականապես մաքրելու գործը, որ նրանից հետո ալ-Մանսուր Կալավուն (1279-1290 թթ.) և ալ-Աշրաֆ Խալիլ (1290-1293 թթ.) սուլթանները պիտի եզրափակեին: Այլ կերպ ասած՝ Մամլուքյան սուլթանության հռչակումից մեկ տասնամյակ անց միայն՝ հենց Բայբարսի կառավարման օրոք, մշակվեց այս պետության աշխահաքաղաքական հայեցակարգը, և դրվեցին նրա կայացման պետական-գաղափարաբանական հիմքերը: Բայբարսի գահակալման հենց սկզբից ընդհուպ մինչև Հայոց թագավորության մայրամուտն ու կործանումը, մուսուլմանական այս պետության հետ հարաբերությունների հարցը մեկընդմիջ տամբադրեց իր տեղը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում:

³⁹³ Կիրակոս Գանձակեցին նույնպես գրում է, թե «[Քիթբուզա] ել պատերազմաւ ընդդէմ Սուլտանին, և քաջապէս մարտուցեալ՝ կոտորեցաւ ամենայն զօրօքն, որ ընդ իւր. զի յոյժ բազումք էին եգիպտացիքն, և կռուեցան ի դաշտն Թաբորական լեռինն: Կային ընդ Քիթբուզային ի պատերազմի անդ յոյովք ի Հայոց և ի Վրաց, որք ընդ նմա կոտորեցան»: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 389: Ըստ Վարդանի՝ Այն Ջալուտում ջարդված մոնղոլական զորքերի մնացուկներն ապաստան են գտել Կիլիկիայում, որոնց Հերոմն օրկան, նծույզներ և ռոնիկ է ավել՝ պատվով նամապարհելով «առ տէրն իւրեանց»: Տե՛ս Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 152:

³⁹⁴ Ինչ վերաբերում է մամլուքյան պատմիչներին, ապա նրանք ոչինչ են հաղորդում Այն Ջալուտի նակատամարտին հայերի մասնակցության մասին: Նրանցից Իբն Թադրի Բիդրին միայն գրում է, թե «Քիթբուզա-նոյինը հավաքեց բոլոր նրանց, ովքեր Ասորիքում էին թաթարների և այլոց»: Տե՛ս Ibn Tagrı Birdi, Al-Nuǧūm al-zāhira, ց. 7, §. 73:

³⁹⁵ Ibn al-ʿAmid, Al-Maǧmūʿ al-mubārak, §. 54-55.

2.2 ՄՈՆԳՈԼՆԵՐԸ, ԻԼԽԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Այս երկրի բնակիչների՝ Բրիստոնյա լինելու պատճառով եգիպտոսի և Ասորիքի մուսուլմանական զորքերը [մշտապես] ասպատակում են Հայոց երկիրը (*welāyat-e Arman*): Թաֆնուրը (կիրառված է որպես հատուկ անուն), որ Փոֆր Հայաստանի (*Armīnya Şuğrā*) արքան է, թողնում է երկիրը և նավով գնում ծովը: Ռեյ-դը-Ֆրանսը (*Raydāfrāns*, այն է՝ «Ֆրանսիայի արքան»), որ ֆրանկների երկրի մեծագույն արքան է, սուրհանդակ ուղարկեց Թաֆնուրի մոտ՝ ասելով. «Դու մեծ երկիր ունես. ամեն մի գյուղից [ընդամենը] երեք հեծյալ հանի՛ր և մուսուլմանների դեմ կռի՛վ տուր, մինչև որ նրանք փախչեն»: Թաֆնուրը պատասխանեց. «100 հազար հեծյալ կազմուպատրաստ պահելու համար մեծ գումար է հարկավոր, մինչդեռ, երբ եգիպտացիներն են ասպատակում, երկիրն 10 հազար դինարից ավելի վնաս չեն պատճառում, և շնորհիվ ամուր բերդերի՝ նրանց ձեռքը ոչինչ չի ընկնում»:

Ռաշիդ ալ-Դին, «Թարիխ-ե աֆրանջ»³⁹⁶

ԺԳ դարի կեսին մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական թատերաբեմ ելավ ևս մեկ ազդեցիկ ուժ: Նոսրեյ Իրանի մոնղոլական Իլխանությունը մասին է:

Մոնղոլների հաղթական շարժը Մերձավոր և Միջին Արևելք սկսվել էր դեռ ԺԳ դարի քսանական թվականներից Թեմուչինի ղլխավորությամբ: Իր շուրջը համախմբելով արևելաեվրասիական տափաստանների թյուրք-մոնղոլական քոչվոր ցեղերին՝ նա իրեն Մեծ խան էր հռչակել դեռ 1206 թ. գումարված կուրուլտայում («Մեծ ժողովում»)³⁹⁷՝ որդեգրելով Չինգիս խան անունը³⁹⁸: Այդ իրադարձությունը ծնունդ

³⁹⁶ Jahn K., *Die Frankengeschichte des Rašīd ad-Dīn*, Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 1977, S. 44, 45; Tafel 42, ինչպես նաև **Rašīd al-Dīn Faḍl Allāh Hamadānī**, *Ġāmi' al-tawārīḥ (Tārīḥ-e Afranġ, Pāpān wa-Qayāsera)*, taṣṭīḥ-e Moḥammad Rowšān, Mīrāṭ Maktūb, Tehrān, 2005, ց. 1, ց. 42. Տե՛ս նաև **Հ.Գ. Փափազյան**, «Ռաշիդ-դ-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին», *ՊԲՀ*, 1978, № 2, էջ 129-139:

³⁹⁷ Կուրուլտայի ինստիտուտի և նրա իրավական ասպեկտների լուսաբանումը տե՛ս **F. Hodous**, “The Quriltai as a Legal Institution in the Mongol Empire”, *CAJ*, vol. 56, 2012/2013, pp. 87-102:

³⁹⁸ Տիտղոսը սովորաբար քարգմանվում է որպես «*ովկեանյան*» կամ «*աշխարհակալ*» խան, թեև գիտական շրջանառության մեջ է նաև նրա բացատրության մեկ այլ՝ «*ամուր*» կամ «*զորեղ*»

առավ Մոնղոլական Մեծ տերութիւնը (Yeke Monggol Ulus), որ մի քանի տասնամյակում պիտի վերածեր մարդկութեան պատմութեան ողջ ընթացքում երբեք գոյութիւն ունեցած ամենամեծ ցամաքային պետութեան³⁹⁹: Մինչև իր մահը նա հասցրեց վերջ դնել Կարա-խիտայի խանութեան (1218 թ.) գոյութեանը, սկսեց նաև Թանգուտներին (կամ Սի Սյա՝ Xī Xià) պետութեան նվաճման գործը, որը, սակայն, մոնղոլական բանակների հարվածների տակ վերջնականապես ընկավ միայն 1227 թ.՝ Չինգիս խանի հանկարծահաս մահվանից մոտ մեկ ամիս անց: 1215 թ. նա ծանր պարտութեան մատնեց Չին կայսրութեանը և գրավեց նրա մայրաքաղաքը, թեև նրան վիճակված չէր տեսնելու նաև այս հարստութեան վերջնական հպատակեցումը, որ իրականութիւն պիտի դառնար միայն 1234 թ.՝ Ուգեդեյ խանի օրոք (1229-1241 թթ.): Չինգիս խանի մեծագույն նվաճումներից մեկն Իրանի Խորեզմ-շահերի պետութեան կործանումն էր 1219-1223 թթ. ընթացքում, որից հետո իր տիրույթներին կցեց Իրանի և Միջին Ասիայի ընդարձակ տարածքներ: Աշխարհակալի մահից հետո նրա որդիներն

խան ստուգաբանությունը: Տե՛ս **P. Pelliot**, “Les Mongols et la papauté”, ROC, tome III (XXIII), 1922-1923, p. 22-23; Հմմտ. **I. de Rachewiltz**, *The title Činggis Qan / Qayan re-examined*, in Heissig W., Segaster K., *Gedanke und Wirkung, Festschrift zum 90. Geburtstag von Nikolaus Poppe*, Wiesbaden, 1989, pp. 281-298:

³⁹⁹ Չինգիս խանի նվաճումների, Մոնղոլական տերության և առանձին ուլուսների մասին հսկայական գրականություն կա: Առավել կարևորներից տե՛ս **В. Бартольд**, *Сочинения, том I, Туркестан в эпоху монгольского нашествия*, изд. Восточной литературы, Москва, 1963 (երկու մասով առաջին անգամ հրատարակվել է դեռ 1898-1900 թթ.): **R. Grousset**, *Empire of the Steppes: A History of Central Asia*, tr. by N. Wallford, Rutgers University Press, New Brunswick, 1970; **J.J. Saunders**, *The History of the Mongol Conquests*, University of Pennsylvania Press, Philadelphia, 1977; **D. Morgan**, *The Mongols*, Basil Blackwell, Oxford, 1986 (2-րդ լրամշակված հրատարակությունը՝ Blackwell Publ., 2007); *The Mongol Empire and its Legacy*, ed. by **Amitai-Preiss R.** and **Morgan D.**, E.J. Brill, Leiden, 1999 (հետալստ՝ *The Mongol Empire* (1999), հոդվածների ժողովածու); **Th. Allsen**, *Mongol Imperialism*, University of California Press, Berkeley, 1987, ինչպես նաև **նույնի՝** *Culture and Conquest in Mongol Eurasia*, Cambridge University Press, Cambridge, 2001; **G. Lane**, *Genghis Khan and Mongol Rule*, Greenwood Press, 2004, ինչպես նաև **նույնի՝** *Daily life in the Mongol empire*, Greenwood Press, 2006, ինչպես նաև **P. Jackson**, *The Mongols and the West: 1221-1410*, Routledge, 2014; **D. Aigle**, *The Mongol Empire* (ամբողջական վերնագիրը տե՛ս վերևում՝ ծնթգր. 341) և այլն:

ու թոռները, թեև շարունակեցին մոնղոլահպատակ հոգերի ընդարձակումը, բայց ԺԳ դարի կեսերից սկսած կայսրությունը տրոհեցին չորս ինքնավար պետությունների (ուլուսների)՝ Ջոչիի ուլուսի (հետագայում՝ Ոսկե Հորդա, 1260-1480 թթ.), Չաղաթայի ուլուսի կամ խանություն (1224-1678 թթ.), Մեծ խան Ղուբլայի և նրա հաջորդների ստեղծած Յուան հարստության (1271-1368 թթ.) և վերջապես Իլխանության (1256-1335 թթ.)⁴⁰⁰: 1236-1245 թթ. ընթացքում Չորմաղան և Բաչու Նոյինների նվաճումներով մոնղոլների տիրապետությունը հաստատվեց նաև Վրաստանի, Մեծ Հայքի (բուն Հայաստան) և Ատրպատականի մեծ մասի վրա⁴⁰¹: 1243 թ. հունիսի 26/27-ին Քյոսեդաղի (Չմանկատուկի) ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո, ինչպես նախորդ ենթադրվում ենք նշել, մոնղոլներին հնազանդվեցին նաև Ռումի սելջուկները: Սա ազդարարեց Փոքր Ասիայում Իկոնիայի սուլթանության գերիշխանության ավարտը: Մոնղոլական վերահաս ներխուժման վտանգն ընդհուպ մոտեցավ Հայոց թագավորության սահմաններին: Այս պարագայում Հայոց ռազմավարական վերնախավը՝ ի դեմս Հեթում արքայի, Սմբատ Գոնդաստաբլի և թագավորահայր Կոստանդին պալլի, շտապեց իր հնազանդությունը հայտնել մոնղոլներին: Ըստ Ռումի սելջուկների պաշտոնական պատմիչ Նասիր ալ-Դին Հուսայն իբն Բիբի՝ ճակատամարտից առաջ Ղիյաս ալ-Դին Քախտսորով Բ-ը (1237-1246 թթ.), ստանալով Բաչու-Նոյինի կողմից Կարինի (Էրզրումի) առման մասին լուրը, փորձել է իր դաշնակից կամ իր ազդեցության տակ գտնվող երկրներից զորքեր

⁴⁰⁰ Մոնղոլական ուլուսների ձևավորման գործընթացին նվիրված հոդված ունի Պ. Ջեֆսոնը: St' u P. Jackson, *From ulus to khanate: the making of Mongol states c. 1220 - c. 1290*, in *The Mongol Empire* (1999), pp. 12-38:

⁴⁰¹ St' u Ա.Գ. Գալստյան, «Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները», ՊՔՀ, № 1, 1964, էջ 91-106; R.G. Bedrosian, *The Turco-Mongol invasions and the lords of Armenia in the 13-14th centuries*, Ph.D diss., Columbia University, 1979, pp. 94-116; Ա.Ի. Շաննազարյան, «Հայ-վրացական և մոնղոլական հարաբերությունները (1236-1240-ական թթ.)», ԼՀԳ, № 1, 2004, էջ 3-22, ինչպես նաև **ճույնի՝** «Զախարյան Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից», ՊՔՀ, № 2, 2004, էջ 142-160, **ճույնի՝** «Հայաստանի արևմտյան և հարավային շրջանների գրավումը մոնղոլների կողմից», ՊՔՀ, № 3, 2004, էջ 171-179; D. Bayarsaikhan, *The Mongols*, pp. 43-69:

հավաքել մոնղոլներին դիմակայելու համար: Նա դեսպանություններ է ուղարկել նաև «Սսեցուն» (նկատի ունի Կիլիկիո չալոց արքա Հեթումին) և մեծ դրամական շնորհի (100 հզ. դինար և մի քանի միլիոն դիրհամ) դիմաց Ֆրանկ վարձկանների օժանդակ զորքերով իրեն օգնության հասնելու պահանջով դիմել⁴⁰²: Իսկ ըստ Բար Հեբրեոսի՝ Կոստանդին պալլն անձամբ Կեսարիա է գնացել, որտեղ սուլթանն ընդունել է նրան մեծ պատվով և շնորհներով և մոնղոլների դեմ պատերազմում իրեն օգնելու խոստում ստացել⁴⁰³: Այն, որ ի շարս Փոքր Ասիայի և Ասորիքի մի խումբ Այյուբյան տիրակալների՝ Իկոնիայի սուլթանին զինական օգնություն տրամադրելու պարտավորություն է ունեցել նաև չալոց արքան, հաստատում է նաև Սիմոն դը Սենթ-Քվենտինը, ում պնդմամբ չալոց արքան պետք է 4 ամսով 1400 «նիզակ» (այսինքն՝ «նիզակակիրների զորաջոկատներ») տրամադրեր սելջուկյան բանակին⁴⁰⁴:

Ըստ Իբն Բիբի երկի համառոտ տարբերակի՝ երբ սելջուկյան զորքը պատրաստվում էր մոնղոլների ժամանմանը, «...լուր ստացվեց, որ հասնում է նաև takwar-ը («քազավոր») երեք հազար ֆրանկներով»⁴⁰⁵: Ռ. Շուքրուրովն ու նրան հետևելով նաև Դ. Կորոբեյնիկովը Ռումի սուլթանին օգնության գնացող այս takwar-ին նույնացրել են Տրապիզոնի կայսր Մանուել Ա Մեծի հետ⁴⁰⁶: Մինչդեռ, Իբն Բիբի երկի ամբողջական տարբերակում takwar-ի փոխարեն bāyl sīs («Սսի պալլ») է,

⁴⁰² Տե՛ս **Ibn-i Bībī**, *El-Evāmirü'l-'Alā'iyye fī'l-umūri'l-'Alā'iyye*, onsöz ve fihristi hazirliyan A.S. Erzi, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara, 1956 (երկի ամբողջական տարբերակ, հետալսյա՝ **Ibn-i Bībī**, *El-Evāmirü'l-'Alā'iyye*), թ. 518-519; **Ibn Bībī**, *Muhtasar*, թ. 236 (երկի համառոտ տարբերակ): Հմմտ. **Ibn Wāṣil**, *Mufarriğ al-kurūb*, ց. 5, թ. 326-327:

⁴⁰³ **Bar Hebraeus**, *Chronography*, p. 407.

⁴⁰⁴ Տե՛ս J. Richard, **Simon de Saint-Quentin**: *Histoire des Tartares*, Paris, 1965, p. 70-71: Տե՛ս նաև **Cl. Cahen**, *La Turquie*, p. 93-94:

⁴⁰⁵ **Ibn-i Bībī**, *El-Evāmirü'l-'Alā'iyye*, թ. 522; **Ibn Bībī**, *Muhtasar*, թ. 238.

⁴⁰⁶ **Р. Шукров**, *Великие комнины и Восток (1204-1461)*, под ред. С. П. Карпова, Алетея, Санкт-Петербург, 2001, стр. 160-161; **D. Korobeinikov**, *Byzantium*, pp. 178-179. Ռ. Շուքրուրովը հետապնդում փոխել է իր կարծիքը հիշյալ takwar-ի անձի վերաբերյալ: Տե՛ս **P.M. Шукров**, “Образ Киликийской Армении в анатолийских мусульманских источниках (XIII-XIV в.)”, *42 (2016)*, էջ 104, ինչպես նաև **Ռայնի**՝ “The Image of Cilician Armenia in Anatolian Muslim Sources (XIII-Early XIV Centuries)”, in *CA (2019)*, p. 96.

ինչը խոսում է հիշյալ տեսակետի սխալ լինելու մասին: Ուստի, մեր կարծիքով, իբն Բիբին հաստատապես Հայոց արքային է նկատի ունեցել: Հեթումը հավանաբար ձևացրել է, որ ինքը նույնպես օգնության է գնում սուլթանին՝ այնքան ժամանակ հապաղելով, ինչպես Բար Հեբրեոսն է գրում, «մինչև տեսնի՝ ինչով են ավարտվում դեպքերը»⁴⁰⁷:

Ինչևէ, Հայոց արքան և Կոստանդին պայլը ոչ միայն չկատարեցին Հայ-Ֆրանկյան օժանդակ գործ տրամադրելու իրենց տված խոստումը, այլև Կիլիկիո երկիրն ու ժողովրդին մոնղոլների ավերիչ ներխուժումից զերծ պահելու նպատակով հարկադրաբար, թեկուզև հյուրընկալության բարոյական նորմի կոպիտ խախտմամբ Ռումի սելջուկ սուլթանի՝ Կիլիկիայում ապաստան գտած ընտանիքին (մորը⁴⁰⁸, կնոջը և դստերը) հանձնեցին մոնղոլներին⁴⁰⁹: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հեթումը մեծ դժվարությամբ և մեղքի զգացումով է գնացել այդ քայլին՝ ասելով. «...Լա՛վ էր ինձ, եթե գորդի իմ՝ զևսն, խնդրեալ էին յինէն,

⁴⁰⁷ Bar Hebraeus, *Chronography*, p. 407. Հմմտ. Cl. Cahen, *La Turquie*, p. 96; M.S. Taqquš, *Tārīḥ Salāḡīqa al-Rūm, Dār al-Nafā'is*, Bayrūt, 2008, §. 285: Նման մի տեղեկություն էլ հաղորդում է Սիմոն դը Սենթ-Քվենտինը: Ըստ նրա, երբ մոնղոլները գրավել են Կեսարիան (գրավվել է Քյոսեդաղի նակատամարտից հետո-Գ.Գ.), լուր է տարածվել, թե հայոց արքան գալիս է այն ազատագրելու, չնայած որ հագիվ թե մեծ զորով զար: Այնուամենայնիվ, մոնղոլներն այս լուրից տագնապել են և թողնելով իրենց ավարը՝ փախել: Բայց հետո, երբ արքայի ժամանման լուրը չի հաստատվել, վերադարձել են: Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 76:

⁴⁰⁸ Մուրաֆյանը վերջերս եզրակացրել է, որ սուլթանի մայրը՝ Ման-Պերի Խաթունը, կարող էր հայկական ծագում ունենալ: Նա հավանաբար Կիո Վարդ (Ֆար[ի]դ) անունով հայազգի հունադավան իշխանի դուստրն էր: Տե՛ս Cl. Mutafian, *L'Arménie*, p. 134-135: Նույն եզրակացության համար տե՛ս նաև A. Eastmond, "Gender and patronage between Christianity and Islam in the thirteenth century", in *First International Byzantine Studies Symposium Proceedings, Istanbul 25-28 June, 2007*, Istanbul, 2010, pp. 78-79: Կիո Վարդի և նրա դստեր հունական ծագման ենթադրության մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 74-75 և հատկապես՝ R. Shukurov, "Harem Christianity: The byzantine identity of Seljuk princes", in *The Seljuks of Anatolia: Court and society in the medieval Middle East*, ed. by A.C.S. Peacock and Sara Nur Yildiz, I.B. Tauris, 2013, p. 117, 136-137:

⁴⁰⁹ Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'yye*, §. 536; Ibn Bībī, *Muhtaşar*, §. 245; Մսբաա, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 226-227; Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 285; Bar Hebraeus, *Chronography*, pp. 407-408.

ֆան թէ գնոսա»⁴¹⁰: Հիրավի, Հեթումի արարքը միակողմանի գնահատել
 չի կարելի, քանզի Ղիյաս ալ-Դինի ընտանիքին մոնղոլներին հանձ-
 նելով նա հազարավոր հայրենակիցների անվտանգության կենաց-մա-
 հու հարց էր լուծում: Զուր չէ, որ ժամանակակից հիշատակագիր-
 ներից մեկն ուրախությամբ արձանագրում է. «Արդ, ի սոյն այս բազմա-
 վրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հեթմոյ խորագետ
 իմաստութեան և նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղու-
 թեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր»⁴¹¹:

Արաբագիր հեղինակներից այս դեպքերի մասին վկայությունն է
 տալիս նաև Իզզ ալ-Դին իբն Շադդադը: Նա մասնավորապես գրում է.
 «Նրանք (հայերը) նրա ծառայության և հնազանդության տակ էին, ֆանի դեռ
 [վեց հարյուր] ֆառասուններու թվականի Մուհարրամ ամսին (1244 թ. հու-
 նիս, որը սխալ է. պետք է լինի 641 թ.) թաթարները չէին բախվել Ղիյաս ալ-
 Դինի հետ, և վերջինս էլ նրանցից (հայերից) աջակցություն և օգնություն չէր
 պահանջել նրանց դեմ [կոպելու համար]: Սակայն նրանք հրաժարվել էին [օգ-
 նություն տրամադրել] և անմասն էին մնացել նրա հետ պատահածին: Այնու-
 հետ տեղի ունեցավ մարտը (այն է՝ «Քյոսեդաղի հակառակմարտը»-Գ.Դ.),
 որի մասին մենք հետագա շարադրանքում կխոսենք: Երբ նա հարձակման եմ-
 քարկվեց [մոնղոլների կողմից], Հեթումը (բնագրում սխալով՝ «Հեթումի որդի
 Լեոնը»-Գ.Դ.) Հայոց արքան, և նրա սպասավորները կողոպտեցին նրա
 գանձարանը և նրա մոր հետ միասին ուղարկեցին Բայշու-նոյինին»⁴¹²:
 Այնուամենայնիվ, մոնղոլներին հպատակվելուց և նրանց հետ խաղա-

⁴¹⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 285: Կոստանդինի և Հեթումի արարքի մասին
 պարսկամեջով է արտահայտվում նաև Սիմոն դը Սենթ-Քվենտինը: «Լեոնի մահից հետո,-
 գրում է նա,- այս Հայաստանի (իմա՝ «Փոքր Հայաստանի») Կիլիկիայի) պարոններից մեկը՝
 Կոստանդին անունով, բռնի ուժով առևանգեց նրա դստերը և ամուսնացրեց իր որդու հետ: ...
 Սույն Կոստանդինը տարբեր հնարներով և միջոցներով սպանել է Հայաստանի վաթսուներկու
 մեծ պարոնների: Եվ երբ Քուրքիայի սուլթանը նրա մոտ է ուղարկել իր մորը և քրոջը՝ որպես
 իրեն հավատարիմ այրի և բարեպաշտ քրիստոնյայի, որ ապաստան գտնեն նրա մոտ և խույս
 տան թաթարներից (իմա՝ մոնղոլներից), նա իրեն գրսևորել է որպես անհավատ և ուխտա-
 դրուժ: Նա հանձնել է նրանց թաթարներին՝ նրանց բարեհաճությունը շահելու համար»: Sté-
 Simon de Saint-Quentin, Histoire des Tartares, p. 89:

⁴¹¹ ՀԶԶ, ԺԳ դար, էջ 233:

⁴¹² ‘Izz al-Dīn ibn Šaddād, Al-A‘lāq al-ḥaṭīra, ց. 1.2, ց. 240.

ղություն հաստատելուց հետո դեռ բավական ազդեցիկ Ղիյաս ալ-Դինը վճռեց վրեժխնդիր լինել հայերից, քանզի նրանք, ինչպես Իբն Բիբին է գրում, Քյոսեղաղում [սելջուկյան] զորքի պարտության ժամանակ բոլոր հնարավոր վատ արարքներն էին գործել՝ տեղ չթողնելով ներման համար⁴¹³։ Իկոնիայի սուլթանությանը ստորակա հայազգի Կոստանդին Լամբրոնացի իշխանի հետ դաշնակցած՝ սելջուկյան բանակը Սահիր Շամա ալ-Դինի հրամանատարությամբ երկու անգամ՝ 1245 թ. և 1246 թ., ներխուժեց Կիլիկիա, ավերածության ու թալանի մատնեց երկրի շատ բնակավայրեր։ Մասնավորապես 1246 թ. սելջուկներն ահարկու պաշարման ենթարկեցին Տարսոնը՝ քարանետ մեքենաներով քանդելով նրա պարիսպները։ Եվ թեև Սմբատ Սպարապետն ու Կոստանդին Պայլն անձամբ գլխավորեցին Տարսոնի պաշտպանությունը, քաղաքն անկարող եղավ դիմադրել թշնամուն։ Նույն Սմբատն իր տարեգրության մեջ գրում է, որ կռվի թեժ պահին վրա են հասել մոնղոլների դեսպանները և օգնություն առաջարկել պաշարվածներին, բայց «նա չէաք ի լսել. վասն զի գաղաֆն առած ունեին»⁴¹⁴։ Քաղաքի վերջնական առմանը խանգարեցին միայն սկսված տեղատարափ անձրևներն ու Իկոնիայի սուլթանի հանկարծահաս մահը։ «Այդ թվականին սուլթան Ալիաս ալ-Դինը մեծաթիվ բանակ ուղարկեց Տարսոն քաղաքի վրա, - գրում է Բար Հեբրեոսն իր արաբերեն ժամանակագրության մեջ՝ շարունակելով, - և այն որոշ ժամանակով պաշարման օղակի մեջ առան, սկսեցին ննջել և մոտ էին այն ուժով գրավելուն, եթե պաշարումը չհամրնկներ այդ օրերին սուլթան Ալիաս ալ-Դինի մահվան հետ»⁴¹⁵։ Այնուամենայնիվ, Սահիր Շամա ալ-Դինը, սուլթանի մահվան փաստը հայերին չբացահայտելով, նահանջելուց առաջ խորամանկությամբ նրանց խաղաղություն առաջարկեց Պռականա և մի քանի այլ ամրոցներ հանձնելու դիմաց։ «Երբ Թագավորը (Takwar) լսեց այս ուղերձը, - գրում է Իբն Բիբին, - հանգստությունը պարոտեց նրան, և նա համաձայնեց։ Հետո նա դեսպան ուղարկեց [սելջուկյան] էմիրների մոտ և amān

⁴¹³ **Ibn-i Bībī**, *El-Evāmīrü'l-‘Alā’iyye*, §. 546-547; **Ibn Bībī**, *Muhtaşar*, §. 250.

⁴¹⁴ **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 123-124:

⁴¹⁵ Տե՛ս **Ibn al-‘Ibrī**, *Muhtaşar*, §. 446: Գրեթե նույն հաղորդումը կա նաև հեղինակի ասորերեն ժամանակագրության մեջ: Տե՛ս **նույնի՝ Chronography**, p. 410:

խնդրելով՝ Պռականա (բնագրում՝ *Brākanā*) բերդը մի ֆանի այլ ամրոցների հետ զիջեց սուլթանի ենթականերին, ինչպես նաև ուղարկեց նախկինում չվճարած և վճարելիք հարկերը (*ḥarāḡ-e māḍī wa-mostaqbal*)՝ նվերների հետ միասին»⁴¹⁶։ Նույնի մասին Սմբատն իր հերթին գրում է, որ իրենք՝ անտեղյակ սուլթան Ղիյաս ալ-Դինի մահվան փաստին, համաձայնեցին Պռականա ամրոցը զիջելու դիմաց պատերազմական գործողությունները դադարեցնելու սելջուկների առաջարկին։ «Եւ չեաք իմացեալ զսուլթանին մահն, - գրում է նա, - զի կարեաք նեղել յետ երկու տարւոյ (այսինքն՝ 1248 թ.) գողացաք զՊռականա»⁴¹⁷։

Հայ-սելջուկյան պատերազմի մասին հաղորդում է նաև Իբն Շադ-դադը, միայն թե իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում. «Երբ զինադադար հաստատվեց Ղիյաս ալ-Դինի և թաթարների միջև, նրանք թույլատվություն խնդրեցին [նրանցից] պատերազմելու Հեթումի դեմ և ստացան այդ թույլատվությունը (ընդգծումը մենք է-Գ.Գ.): [Սուլթանը] զորք պատրաստեց նրանց դեմ, արշավեց նրանց վրա, գերեվարեց և պաշարման մեջ գցեց Տարսոնում և գրեթե պիտի գրավեր այն։ Սակայն Հեթումը [սելջուկ] զորահրամանատարի մոտ դեսպան ուղարկեց, ով նրա մոտ գնաց գումարով, իսկ նա էլ վերցրեց այն և հեռացավ։ Դա տեղի ունեցավ [հիջրայի] 643 թվականին (1245 / 1246 թ.)»⁴¹⁸։ Նախ, նկատենք, որ ըստ արաբ մատենագրի՝ Հայ-սելջուկյան զինադադարը հաստատվել է Հեթումի վճարած դրամի դիմաց, այլ ոչ թե՝ Պռականա բերդի հանձնման։ Հակառակ Սմբատ Գունդստաբլի վերոբերյալ վկայությանը՝ ավելի կարևոր է Իբն Շադդադի այն պնդումը, թե Բաչու-նոյինը թույլ է տվել սելջուկներին արշավել Կիլիկիա։ Սա նշանակում է, որ, չնայած մոնղոլներին հայտնած հպատակությանը, Հայ-մոնղոլական գործակցային հարաբերություններ դեռ ձևավորված չէին, և Բաչուն սկզբում ավելորդ է համարել միջամտել Ղիյաս ալ-Դինի և Հեթումի կոնֆլիկտին⁴¹⁹։ Հետևապես սելջուկների այս արշավանքները մեկ անգամ ևս Հեթումին կանգնեցրել էին այն պարզ գիտակցման առաջ, որ Իկո-

⁴¹⁶ Տե՛ս **Իբն Բիբի**, *Muhtaşar*, թ. 250 և հմմտ. **Իբն-ի Բիբի**, *El-Evāmīrū'l-'Alā'yye*, թ. 546-547։

⁴¹⁷ Տե՛ս Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 124։ Հմմտ. **Ռույնի**՝ Վենետիկ, էջ 228։

⁴¹⁸ 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-A'lāq al-ḥaṭīra*, ց. 1.2, թ. 240.

⁴¹⁹ Հմմտ. Cl. Cahen, *La Turquie*, p. 230, ինչպես նաև **Ռույնի**՝ *Pre-Ottoman Turkey*, p. 271։

նիայի սուլթանությունից եկող վտանգը հիմնովին չեզոքացնելու և թիկունքի լիարժեք անվտանգություն ստանալու համար անհրաժեշտ է ավելի խորացնել կապերը մոնղոլների հետ և պաշտոնականացնել նրանց հետ հարաբերությունները: Այդ նպատակին էր ուղղված 1246-1248 թթ. Սմբատ Գունդստաբլի ուղևորությունը Մոնղոլական տերության մայրաքաղաք Կարակորում՝ Հայոց թագավորի անունից Մեծ Խան Գուլյուկին հնազանդություն հայտնելու և Հայոց թագավորության հետ կապված մոնղոլների ծրագրերը ճշտելու նպատակով⁴²⁰:

Հայկական և ասորական մի շարք աղբյուրներից բացի՝ Սմբատի ղեկավարած հնացությանը վերաբերող ուշագրավ վկայություն կա նաև Իլխանության պարսիկ պատմագիր Զուլայնիի Tārīḥ-e Ġahān-Guṣā (այն՝ «Աշխարհակալի պատմությունը») երկում: Վերջինս, խոսելով Կարակորումում գումարված մեծ կուրուլտայի, Գուլյուկ խանի (1246-1248 թթ.) թագադրության արարողության և հաջորդած անցքերի մասին, մոնղոլական արքունիք ժամանած հյուրերի շարքում հիշատակում է ոմն sulṭān-e Tākavor-ի (բառացի՝ «Քաֆալորի սուլթան»)՝⁴²¹: Այսինքն մատենագիրը ոչ միայն Հայոց գահակալին սուլթան է անվանում, այլև թագավոր բառը կիրառում է տեղանվանական նշանակությամբ (տե՛ս ներքևում): Սակայն Հայոց թագավոր Հեթումը չէր կարող ներկա լինել Գուլյուկի թագադրությանը, քանզի աներկզմի է, որ նա Կարակորում է մեկնել միայն 1254 թ.: Մի՞թե «Աշխարհակալի պատմության» հեղինակը sulṭān-e Tākavor ասելով Սմբատին է նկատի ունեցել:

Վերջերս Կ. Մուլթաֆյանը, իր «Լեանտյան Հայաստանը» գրքում անդրադառնալով այս արտահայտությանը, դժվարացել է հստակ բացատրություն տալ: «Քաֆալոր» բառը,- գրում է գիտնականը,- հայերեն «արֆա» նշանակությամբ տրամաբանորեն կարելի է նույնացնել

⁴²⁰ Տե՛ս Գրիգոր Ակենցի, Պատմութիւն թաթարաց, էջ 27; R.P. Blake, R.N. Frye, “History of the Nation”, p. 312:

⁴²¹ Տե՛ս ‘Alā’ al-Dīn ‘Aṭā’ Malik ibn Muḥammad Ġuwaynī, Kitāb Tārīḥ-e Ġahān-Guṣā, taṣḥīḥ Muḥammad Qazwīnī, ց. 1, Barīl, Laydan, 1919, ց. 205, 212: Մեկ այլ տեղում երկի խմբագիրը, բնագրում եղած Diyār Bakr-ը մյուս երկու կիրառությունների հիման վրա համարելով գրական սխալ, ուղղում-դարձնում է Tākavor: Տե՛ս Անդ, ց. 205:

Հեթումի հետ, ինչպես որ Բար Հեբրեոսն է գրում»⁴²²: Ի վերջո, Կլ. Մութաֆյանը ենթադրում է, որ Ջուվայնին «Թաֆալորի սուլթան» ասելով նկատի է ունեցել Ջաքարյան իշխան Ավագին՝ այդ ենթադրության համար կռիվն ծառայեցնելով Վրաց անանուն տարեգրի վկայությունները: «Տարեթվերը համապատասխանում են. - չարունակում է Մութաֆյանը, - Ավագը, թեպետև թագավոր չէր, այլ այսպես ասած «իշխանաց իշխան» էր Մեծ Հայքում (Բուն Հայաստան), բայց պետք է ենթադրել, որ [Ջուվայնին] հենց նրան է նկատի ունեցել, և որ հենց նա էր ներկայացնում հայկական իշխանությունները [թագադրության] արարողության ժամանակ»⁴²³: Այն, որ Ավագն իսկապես եղել է մոնղոլ խանի արքունիքում, անվիճելի է, ու այդ մասին վկայում է ոչ միայն «Վրաց ժամանակագրությունն», այլև Կիրակոս Գանձակեցին⁴²⁴: Բայց խոսքն այստեղ աթաբեկ Ավագի այն այցելության մասին է, որ վերջինս կատարել է ենթադրաբար 1240-1241 թթ. Մեծ խան Ուգեդեյի մոտ: Մութաֆյանի ակնարկած երկրորդ այցելության մասին հայկական աղբյուրները լռում են, իսկ Վրաց տարեգրի վկայությունների տարտամուկությունը թույլ չի տալիս աներկմտորեն պնդել այդ մասին: Այսպես, Ջուվայնիի, Ռաշիդ ալ-Դինի և Հոռմի պապ Ինոկենտիոս Դ-ի բանազնաց Պապոս Կարալինիի վկայությամբ՝ երկու Դավիթների գահակալական վեճը հարթել է Գույուկ խանը, մինչդեռ Վրաց տարեգրը պնդում է, թե Բաթու խանը Դավիթներին ուղարկել է Մանգու խանի մոտ, այլ ոչ թե Գույուկի, ավելին, գահակալական այդ թնջուկը «բազում տարիներ անց» է լուծվել մեծ խան Ղուբեկայի միջնորդությամբ⁴²⁵: Վրաց հեղինակի այս վկայությունները փաստում են, որ վերջինս չափազանց աղոտ պատկերացում է ունեցել այս ժամանակաշրջանի անցքերի մասին: Ինչևէ, այս ամբողջ խառնաշփոթում Վրաց ժամանակագրի՝ Ավագ աթաբեկի երկրորդ այցելության մասին արած ակնարկ-

⁴²² Նկատի ունի հեղինակի ասորեոսն ժամանակագրությունը: Stéu Bar Hebraeus, *Chronography*, p. 411:

⁴²³ Cl. Mutafian, *L'Arménie*, p. 137.

⁴²⁴ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 262-267:

⁴²⁵ Վրաց ժամանակագրություն (1207-1318), քաղգ. հին վրացերենից, առաջաբան և ծանոթագր. Պարույր Մուսաղյանի, Երևան, 1971, էջ 96-97: Հմմտ. Ստեփանոս Օրբելյանի վկայության հետ: Stéu Ստեփանոս Օրբելյան, *Պատմութիւն*, հտ. Բ, էջ 167:

ները հավաստիության նվաղ հույսեր են ներշնչում⁴²⁶: Այնուամենայնիվ, եթե հավատալու լինենք այդ ականարկներին, միևնույն է չենք կարծում, թե աթաբեկն արժանացած լիներ *sultān* բարձր կոչմանը, որին մուսուլմանական մատենագրության մեջ քրիստոնյա գահակալներն էին անգամ եզակի դեպքերում արժանանում:

Sultān-e Tākavor-ի՝ Մուլթաֆյանի առաջադրած վարկածը միակը չէ գիտական գրականության մեջ: Այս արտահայտությունը ներհակ տեսակետների պատճառ է դարձել նախորդ դարի 30-ական թվականներին սկսած: Նախ «Թաֆալորի սուլթանին» հանգամանորեն անդրադարձել է Մուհամմադ Կազվինին՝ Ջուվայնիի երկի առաջին՝ Բրիլլյան հրատարակության գլխավոր խմբագիրը⁴²⁷ խնդրին տալով մեր կարծիքով բավականին հիմնավոր լուծում: Ապա Ջ. Բոյլեն Ջուվայնիի երկի իր անգլերեն թարգմանության մեջ անդրադառնալով «Թաֆալորի սուլթանին»՝ լիովին համաձայնել է Կազվինիի ենթադրության հետ⁴²⁸: Նախորդ դարի 80-ական թվականներից սկսած մի շարք բյուզանդագետների կողմից շրջանառության մեջ է դրվել *sultān-e Tākavor*-ի մեկնության մեկ այլ տեսակետ: Այն, ըստ էության, առաջին անգամ

⁴²⁶ Ավագ արաբեկի երկրորդ այցելությանը եզրակացությանը Մուրաֆյանից առաջ հանգել է նաև Ա. Շահնագարյանը («Հայ-վրացական և մոնղոլական հարաբերությունները (1236-1240-ական թթ.)», *ԼՀԳ*, 2004, № 1, էջ 3-22): Նա իր ենթադրության համար Վրաց ժամանակագրի վկայություններից բացի նպաստավոր է համարում նաև Բաշու-նոյինի գորակայանում 1247 թ. գտնված Իննոկենտիոս Դ պապի նվիրակ Ասցելինի բանագնացության զեկույցում առկա հաղորդումները ոմն Ավգուստի (այլու՝ Անգուստ) մասին (գիտնականը ենթադրում է, թե խոսքն Ավագի մասին է), որի Կարակորումից ժամանմանն անհամբերությամբ սպասում էին Բաշուի գորակայանում: Շահնագարյանն օգտագործել է Ասցելինի բանագնացության զեկույցի՝ Դ. Ֆադիկովի ռուսերեն թերակատար թարգմանությունը (*Д.И. Языков, Собрание нумер-шестой к татарам и другим восточным народам*, Санкт-Петербург, 1825): Զեկույցի ֆինական տեսման ամբողջությամբ հրատարակել է Ժ. Ռիշարը (ամբողջական հղումը տվել ենք վերևում՝ ծնթգր. 404, ապա երկից օգտագործել): Անգուստի անձի մասին այլ կարծիքների համար տե՛ս **P. Pelliot**, “Les Mongols et la papauté”, *ROC*, Tome VIII (XXVIII), 1931-1932, p. 17 [155]; **Simon de Saint-Quentin**, *Histoire des Tartares*, p. 110; **P. Jackson**, “Eljigidei”, *EIr*, vol. VIII, Fasc. 4, ed. Ehsan Yarshater, Mazda Publishers, Costa Mesa, 1998, pp. 366-367:

⁴²⁷ **Ġuwaynī**, *Tārīḥ-e Ġahān-Guṣā*, ց. 3, ք. 484-490.

⁴²⁸ **J.A. Boyle**, *The History of the World-Conqueror by 'Ala-ad-Din 'Ata-Malik Juvaini (Ph.D.)*, tr. from the text of Mirza Muhammad Qazvini, vol. 1, Harvard University Press, 1958, p. 250, note 6.

արտահայտված ենք գտնում *Բ. Լիպպարդի* ատենախոսության մեջ: Վերջինիս կարծիքով Գուլուկ խանի թագադրությանը ներկա գտնված *sultān-e Tākavor*-ը ոչ այլ ոք է, եթե ոչ Տրապիզոնի կայսր Մանուել Ա Մեծ Կոմնենոսը (1238-1263 թթ.)⁴²⁹: Այնուհետև Լիպպարդի կարծիքին հար և նման տեսակետ է արտահայտել և այս խնդրին մի առանձին հոդվածով անդրադարձել է *Է. Բրայերը*⁴³⁰: Հետո նաև *Ջ. Լանգդոնը*, հաստատված համարելով այդ ենթադրությունը, եզրակացրել է, որ «Թաֆալուրի սուլթանը» պարզապես Տրապիզոնի կայսրության յուրատեսակ անվանումն է՝ տրված նրա տիրակալի տիտղոսի միջոցով⁴³¹: Ռուսական բյուզանդագիտության ներկայացուցիչներից էլ այս կարծիքին են հակված *Ռ. Շուքուրովն*⁴³² ու *Դ. Կորոբեյնիկովը*⁴³³:

Սակայն այս հարցում պարզություն մտցնել է թույլ տալիս *Բար Հեբերեսի* ժամանակագրության արաբերեն խմբագրությունը⁴³⁴, որի՝ մոնղոլների պատմությանը վերաբերող բաժնի առանցքային աղբյուրն անկասկած եղել է նրա ժամանակակից *Ջուվայնիի* «Աշխարհակալի պատմությունը»: Այս և *Ջուվայնիի* երկի համապատասխան հատվածների համադրությունից, ինչը որ արել է Մուհամմադ Կազվինին, պարզ է դառնում, որ խոսքն այստեղ իրականում Սմբատ Սպարապետի մասին է, ում *Ջուվայնիի* չփոթել է Հայոց արքայի հետ.

⁴²⁹ **B.G. Lippard**, *The Mongols and Byzantium*, PhD dissertation, Indiana University, 1983, pp. 179-180.

⁴³⁰ Տե՛ս **A. Bryers**, *The Grand Komnenos and The Great Khan at Karakorum in 1246*, *RO*, 1994, vol. 4, pp. 257-261: Նույնատեսակ ենթադրությունների է հանգել նաև ֆրանսիացի մասնագետ Մ. Կուշանկիսը: Տե՛ս **M. Kursanskis**, “L’empire de Trébizonde et les Turcs au 13e siècle”, *RÉB*, v. 46, 1988, p. 121, note 42: Ըստ նրա՝ Մանուել Ա Կոմնենոսը ձեռնամուխ է եղել սեփական արծաթեդրամների հատմանը հենց մոնղոլ խանին հարկ վճարելու նպատակով: Տե՛ս **նույնի** “The Coinage of the Grand Komnenos Manuel I”, *AP*, t. 35, 1979, pp. 23-37:

⁴³¹ **J.S. Langdon**, “Byzantium’s initial encounter with the Chingissids: An introduction to Byzantino-Mongolica”, *Viator*, vol. 29, 1998, p. 120, n. 140.

⁴³² **Р. Шукуров**, *Великие Комнины*, стр. 162, ինչպես նաև **նույնի**՝ “Трапезундская империя и Восток”, *Карпов С.П.*, *История Трапезундской империи*, Алетея, Санкт-Петербург, 2007, стр. 370.

⁴³³ **Д.А. Коробейников**, “Михаил VIII Палеолог в Румском Султанате”, *ВВ*, 64 (89), отв. ред. И.С. Чичуров, Москва, Наука, 2005, стр. 87.

⁴³⁴ Երկի մասին տե՛ս վերևում:

Ջուվայնի	Բար Հեբրեոս
ա. «Ռոսից եկավ սուլթան Ռոմն ալ-Դինը, և [եկավ] <u>Թաֆալորի սուլթանը</u> , Վրաստանից՝ երկու Դավիթները, Հալեպից՝ Հալեպի տիրոջ եղբայր...» ⁴³⁵ ,	բ. «Իսկ Ռոսից [եկավ] սուլթան Ռոմն ալ-Դինը, իսկ հայերից [եկավ] <u>Գունդստաբլը՝ քաֆֆուր Հեթումի եղբայրը</u> , Վրաստանից՝ Մեծ և Փոքր Դավիթները, իսկ Ասորիից՝ Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիրի եղբայր...» ⁴³⁶ ,
ա. «Եվ յառիկներ տրվեցին <u>Թաֆալորի</u> և Հալեպի սուլթաններին և ղեսպաններին ...» ⁴³⁷ ,	բ. «Եվ յառիկներ ու հավաստագրերեց <u>Թաֆֆուրի</u> և Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիրի համար» ⁴³⁸ (<i>ընդգծումները մերն են - Գ. Դ.</i>):

Ավելին, ասորի պատմագիրը գործածում է «գունդստաբլ» (բնագրում՝ al-kandṣabl) բառը՝ ցրելով բոլոր հնարավոր կասկածները: Դատելով Հայոց Թագավորության մասին ասորի մատենագրի հայտնած տեղեկությունների հավաստիությունից՝ Բար Հեբրեոսին վստահելու համար մենք ծանրակշիռ պատճառներ ունենք, մանավանդ, որ, ինչպես ինքն է վկայում նույն «Հարստությունների պատմություն» երկում, անձամբ ծանոթ էր Հայոց Հեթում արքային և բազմիցս առիթ էր ունեցել զրուցելու նրա հետ⁴³⁹:

Սմբատը, որքան էլ որ տարօրինակ է, իր «Ժամանակագրության» մեջ չափազանց հակիրճ է խոսում իր այցելության մասին⁴⁴⁰: Կարա-

⁴³⁵ Ğuwaynī, Tārīḥ-e Ğahān-Guṣā, ց. 1, ց. 205.

⁴³⁶ Ibn al-ʿIbrī, Muḥtaṣar, ց. 448.

⁴³⁷ Ğuwaynī, Tārīḥ-e Ğahān-Guṣā, ց. 1, ց. 212.

⁴³⁸ Ibn al-ʿIbrī, Muḥtaṣar, ց. 540: Տե՛ս նաև Մունամադ Կազվինիի համեմատական բնութայունը՝ Ğuwaynī, Tārīḥ-e Ğahān-Guṣā, ց. 3, ց. 484-485:

⁴³⁹ Տե՛ս Ibn al-ʿIbrī, Muḥtaṣar, ց. 460: Թեև Ա. Գալստյանն անտեղյակ է եղել «Աշխարհակալի պատմության» հեղինակի այս վիճահարույց արտահայտությանը, նրան հայտնի է եղել Սմբատ Գունդստաբլի բանագնացության վերաբերյալ Բար Հեբրեոսի հիշյալ հաղորդումն աշխատության լատիներեն քարգմանությունից: Տե՛ս Ա. Գալստյան, «Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները», ՊԲՀ, 1964, № 1, էջ 103: Հոդվածը հրապարակվել է նաև Ռ. Բերդսյանի անգլերեն քարգմանությամբ: Տե՛ս A.G. Galstyan, "The First Armeno-Mongol Negotiations", AR, v. 29, 1976, p. 33:

⁴⁴⁰ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 228: Հմմտ. նույնի՝ Փարիզ, էջ 124:

կորուժմ գնալու ճանապարհին՝ Սամարղանդից Կիպրոսի արքա Հենրի Ա Լուսինյանին հղած և [1247 թ.] փետրվարի 7-ով թվագրված նրա նամակն ավելի օգտակար տեղեկություններ է պարունակում նրա այդ առաքելության մասին⁴⁴¹: Նշանակում է, ինչպես Մովսեփյանն է հաշվարկում, Սմբատը Կարակորում պիտի հասած լինի ենթադրաբար 1247 թ. վերջերին (կամ 1248 թ. սկզբներին)⁴⁴², և հետևաբար նա Գոլյուկի թագադրության բուն արարողությանը չէր կարող մասնակցել: Բայց այստեղ հարկ է նշել, որ Սմբատը, ինչպես որ մոնղոլ ուսումնասիրող Դ. Բայարսայխանն է կարծում⁴⁴³, խանի արքունիք է հասել այն ժամանակ, երբ հավանաբար Գոլյուկի թագադրության արարողություններից հետո դեռ Կարակորումում էին Հռոմի պապի բանազնաց Պլանո Կարպինիի, վրացական, Ռուսի սուլթանության, Ալամուտի, Շիրվանի, Լուրի և այլ դեսպանությունները և դեռ շարունակում էին բանակցել մոնղոլական իշխանությունների հետ: Միգուցե, ա՞յս հանգամանքն է մատենագիրներին չփոթության մեջ գցել⁴⁴⁴:

Այսպիսով, «Քաֆալոնի սուլթան» արտահայտությունը, ըստ էության, պարսիկ մատենագրի սխալն է, որը հետագայում ուղղվել է Բար Հեբրեոսի կողմից նրա «Հարստությունների համառոտ պատմու-

⁴⁴¹ J. Richard, “La lettre du Connétable Smbat et les rapports entre chrétiens et Mongols au Milieu du XIII^{ème} siècle”, in *Armenian studies in memoriam Haïg Berbérian*, ed. by D. Kouymjian, Lisbon, 1986, p. 683-696.

⁴⁴² Cl. Mutafian, *L’Arménie*, p. 138.

⁴⁴³ Տե՛ս D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 83, ինչպես նաև նույնի՝ “Submissions to the Mongol Empire by the Armenians”, *Mongolian & Tibetan Quarterly*, v. 18.3, 2009, p. 88: Հմմտ. Կիրակոս Գանձակեցու մի վկայության հետ, ըստ որի Սմբատը Կարակորումից վերադարձել է Իկոնիայի սուլթան Քալխսուրով Բ-ի որդու՝ Ռոմմ աղ-Դինի հետ միասին: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 317-318:

⁴⁴⁴ Ջովայնիի այս արտահայտությունը, հավանաբար, շփոթեցրել է նաև մոնղոլական Իլխանության մյուս պաշտոնական պատմիչ Ռաշիդ ալ-Դինին (մահ. 1318 թ.): Նա, ում *Ġāmi’ al-tawārīḥ*-ի առանցքային աղբյուրներից մեկն «Աշխարհակալի պատմությունն» է, Գոլյուկի թագադրության արարողության հյուրերի շարքից իրավաբաններին բաց է թողնում «Թաքավորի սուլթանին»: Տե՛ս Rašīd al-Dīn, *Ġāmi’ al-Tawārīḥ*, ց. 1, ք. 568, 570; *The Successors of Genghis Khan*, trans. from the Persian of Rašīd al-Dīn by J.A. Boyle, Columbia University Press, New York and London, 1971, p. 181, 183-184, ինչպես նաև Рашид-ад-Дин, *Сборник летописей*, том II, пер. Ю.П. Верховского, изд. АН СССР, Москва-Ленинград, 1960, стр. 118, 120:

թյուն» արաբերենն երկում: Այն, որ սա իսկապես սխալմունքի կամ չիմանալու արդյունք է, վկայում է նաև այն հանգամանքը, որ Զուվայնին, ի թիվս Կարակորում ժամանած հյուրերի, հիշատակում է նաև «Տըրքումի սուլթանին» (Sultān-e Arz-e Rūm)⁴⁴⁵, մինչդեռ էրզրումը մի քանի տասնամյակ էր, ինչ գրավված էր (1201 թ.) ու վաղուց արդեն գտնվում էր Սելջուկյան սուլթանության կազմում (1230 թ.)⁴⁴⁶: Ինչ վերաբերում է մյուս՝ Մանուել Ա-ի վարկածին, ապա այն նույնպես անհամոզիչ է և հիմնովին կառուցված է ենթադրությունների վրա: Գիյոմ (Վիլլիամ) Ռուբրուքի այն վկայությունը, որ Մանգուխանի օրոք Տրապիզոնի կայսրը ենթակա ու ըստ այդմ հարկատու էր մոնղոլական պետությանը⁴⁴⁷, հարկավ, բավարար չէ Մանուել կայսրին Զուվայնիի հիշատակած sultān-e Tākawor-ի հետ նույնացնելու համար⁴⁴⁸:

Ինչևէ, Սմբատի դեսպանագնացությունը հաջողությամբ պսակվեց: Հայոց սպարապետը Գուլուկ խանի արքունիքից հայրենիք վերադարձավ 1250 թ.⁴ իր հետ բերելով «մեծ իառլախ (կամ «յառլիկ», այն է՝ «հրովարտակ», «դաշնաթուղթ») և փայիզայս ոսկիս և Տաթար խաթուն (այն է՝ «կին»-Գ.Գ.) պալիստախատր»⁴⁴⁹: Կիրակոս Գանձակեցին մի շատ կարևոր հավելում է անում՝ գրելով, թե Հայոց թագավորությունը նաև բազում բերդեր և գավառներ ստացավ, «զոր յառաջ լեալ էր Լևոնի արհայի և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին Սուլտանն Հոռոմոց»⁴⁵⁰: Այնուամենայնիվ, Սմբատի այցելությունը մոնղոլական իշխանություններին բավարարել չէր կարող, ուստի Հայոց սպարապետին կար-

⁴⁴⁵ Čuwaynī, Tārīḥ-e Ġahān-Gušā, ց. 1, ց. 305, 312.

⁴⁴⁶ J.A. Boyle, *The History*, p. 250, n. 10.

⁴⁴⁷ *The Journey of William Rubruck to Eastern Parts of the World, 1253-55, as Narrated by Himself, with Two Accounts of the Earlier Journey of John of Pian de Carpine*, Trans. From the Latin, and Ed., with an Introductory Notice by W.W. Rockhill, The Hakluyt Society, London, 1900, p. 46, ինչպես նաև Путешествия в восточные страны Пляно Карпини и Рубрика, Государственное изд. географической литературы, Москва, 1957, стр. 89, 223, прим. 21, 22.

⁴⁴⁸ A. Bryers, “The Grand Komnenos”, p. 260.

⁴⁴⁹ Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն թաթարաց, էջ 28; R.P. Blake, R.N. Frye, “History of the Nation”, p. 314: Այս կնոջից Սմբատը որդի ունեցավ՝ Վասիլ Թաթար անունով, ում մասին խոսելու առիթ դեռ կունենանք:

⁴⁵⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 317:

գաղղրվեց իր եղբայր Հեթում արքային հայտնել անձամբ Կարակորում ներկայանալու Մեծ խանի պահանջը: Հեթումի այցելությունը, սակայն, զանազան հանգամանքների բերումով մի քանի տարի ձգձգվեց. նախ (1248 թ.) մահացավ Գուլուկը, որից հետո Կարակորումում գահակալական վեճեր ծավալվեցին, մինչև որ 1251 թ. տեղի ունեցած կոռուպայում նոր Մեծ խան ընտրվեց Մանգուկ կամ Մոնղուկեն (1251-1259 թթ.): 1252 թ. հունվարին մահացավ հայոց Զաբել թագուհին⁴⁵¹, ինչը հավանաբար նույնպես իր հերթին խոչընդոտ հանդիսացավ Հեթումի երկար սպասված այցելությանը Կարակորում: Բայց մեկ-երկու ամիս անց, երբ Ոսկե Հորդայի խան Բաթուն ևս մեկ անգամ իրեն և Մանգուկ խանին ներկայանալու պահանջ ներկայացրեց, հայոց արքան արդեն չհամարձակվեց հապաղել:

Հայագիր պատմիչներից Հեթումի ուղևորության մասին ամենամանրամասն նկարագրությունը տալիս է Կիրակոս Գանձակեցին՝ հիշատակելով անգամ այն բնակավայրերի անունները, որտեղով Հայոց արքան անցել է կամ կանգ է առել Կարակորում գնալու և տունդարձի ճանապարհին⁴⁵²: Նա ճանապարհին՝ Կարսում, հանդիպել է Բաչուկնոյին, ապա որոշ ժամանակ իջևանել է Արագածի ստորոտում գտնվող Վարդենիս գյուղում՝ Քուրդ Վաչուտյան անունով մի հայ իշխանի տանը⁴⁵³, այնուհետև Եթիլ (Վուլգա) գետի մոտ հանդիպել է

⁴⁵¹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 229: Հմմտ. Bar Hebraeus, *Chronography*, p. 418:

⁴⁵² Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 364-372: Հեթումի ուղերթի՝ Կիրակոսի նշած տեղանունները փոքրիկ է նույնականացնել Ջ. Բոյլեն: Տե՛ս J.A. Boyle, “The journey of Het’um I, king of Little Armenia, to the court of the Great Khan Mongke”, *CAJ*, vol. 9, 1964, pp. 175-189:

⁴⁵³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 364-365: Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 230: Հեթումի ուղեկիցների և նրա ուղևորության կազմակերպիչների թվում Գանձակեցին և Սմբատն առանձնացնում են հատկապես հայագրի Բարսեղ անունով մի ֆանանայի, որ «ղեսպանն էր Բարսիլին» (Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 366) և «բազում անգամ ճանապարհ արարեալ էր ընդ նույն պողոտայ» (Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 230): Այս Բարսեղ վանականը գուցե մեկն էր այն հայ հոգևորականներից, որոնք ըստ Ֆրանսիայի աբա Լուի Թ-ի բանագնաց Գիյոմ (Վիլլիամ) Ռուբրոմբի՝ քարգմանիչներ էին ծառայում Բաբուի որդի Սարթախի աբուներին: Տե՛ս *The Journey of*

Բաթու խանին և նրա որդի Սարթախին: Բար Հեբրեոսն իր ժամանակագրության թե՛ ասորական և թե՛ արաբական խմբագրություններում նույնպես պատմում է Հայոց արքայի դեսպանագնացությունն: Մասնավորապես ըստ Բար Հեբրեոսի արաբերեն ժամանակագրության՝ Հեթումը (Hātīm) Սսից դուրս է եկել 1252 թ. մարտին՝ Խաչվերաց տոնի ուրբաթ օրը: Վախենալով «Ռոմի տեր սուլթանի» խարդավանքներից՝ նա ընդհուպ մինչև Վրաց երկիր հասնելը ծպտված՝ ծառայի կերպարանքով (ըստ Սմբատի՝ «ի կերպս սպասաւորի գրաստու») ⁴⁵⁴ է ճանապարհորդել: Չնայած դրան՝ նրան Երզնկայի (Arzankān) շուկայում մի վաճառական ճանաչել է որպես «Սսի արքա» (malik Sīs), ու քիչ է մնացել, որ բռնվի, և միայն նրան ուղեկցող Հնարամիտ սպասավորի կողմից հասցված ապտակն է ցրել ներկաների կասկածը Հեթումի անձի վերաբերյալ ⁴⁵⁵:

Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Հեթումը Մանգուին տեսակցել է 1254 թ. սեպտեմբեր ամսի 13-ին: Մատուցելով իր հետ տարած նվերները՝ նա Մեծ Խանի կողմից լավ ընդունելության է արժանացել ու նրանից ստացել «հրովարտակ (յառիկ) նշանավոր՝ զի մի ու իշխեսցես նեղել զնա և զաշխարհս նորա, ետ և զիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս» ⁴⁵⁶:

William Rubruck, p. 105; *Путешествия в восточные страны*, стр. 113, ինչպես նաև՝ Bar Hebraeus, *Chronography*, p. 447: Հմմտ. D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 94:

⁴⁵⁴ Տե՛ս Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 229:

⁴⁵⁵ Տե՛ս Ibn al-ʿIbrī, *Muḥtaṣar*, §. 460: Հմմտ. Նույնի՝ *Chronography*, p. 419: Հակոբիկների պատմաբնագրում է, որ այս պատմությունն իրեն անձամբ հայոց արքան է պատմել Տարսնում կայացած իրենց մի հանդիպման ժամանակ՝ Մանգու խանին այցելելուց մի քանի տարի անց: Տե՛ս Նույնի՝ *Muḥtaṣar*, §. 460:

⁴⁵⁶ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 367: Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 230: Հեթում արքայի և Մանգու խանի միջև կայացած բանակցությունների ամենամանրամասն նկարագրությունը տալիս է Հեթում Պատմիչ Կոռիկոսցին՝ թվարկելով այն յոթ խնդրամբները կամ առաջարկությունները (օրինակ, ընդունել քրիստոնեություն, գրավել Բաղդադը և այլ), որոնք Մանգուն իր խոստացել է կատարել: Տե՛ս Hayton, *La flor*, p. 164-165: Հաշվի առնելով «Արևելքի պատմության ծաղկաքաղի» ակնհայտ փառաշահական բնույթագիրը, այն է՝ Հռոմի պապությանը և եվրոպացի տիրակալներին նոր խաչակրության գաղափարներով սոգորելու, Հեթում արքայի հեղինակությունը նրանց աչքում բարձրացնելու, «Սուրբ երկիրը» մուսուլմանների ձեռքից ազատելու գործում նրա ներդրած ջանքերը շեշտելու նպատակադրությունը՝ Կոռիկոսցու շատ վկայություններ անարժանափավատ են թվում արդի

Հիսուսն օր մոնղոլական արքունիքում մնալուց հետո Հեթումը 1254 թ. նոյեմբեր ամսի 1-ին թողնում է Կարակորումն ու բռնում տունդարձի ուղին, որ շուրջ ութ ամիս է տևում: Ծանապարհին նա հանդիպում է Մանգու խանի եղբայր Հուլաղուին, ով ուղևորվում էր Իրան՝ ստանձնելու Մոնղոլական տերությունից արևմուտք ընկած երկրների (Իրան, Ասորիք, Եգիպտոս, Ռում, Հայաստան) կառավարման և ընդարձակման գործը: Վերստին Վարդենիս հասնելով և առժամանակ այնտեղ կանգ առնելով՝ հայոց արքան իր ուղեկիցներից Բարսեղ վանականին ուղարկում է Բաթու խանի մոտ՝ նրան Մանգու խանից բերած գրություններն ու հրովարտակը ցույց տալու, «զի և նա ընդ նմին օրինակի գրեսցէ հրամանս»⁴⁵⁷: Ըստ Բար Հեբրեոսի՝ Հեթումը Կիլիկիա է հասել 1255 թ. սեպտեմբերի 1-ին՝ Բաչու-նոյինի ուղեկցությամբ⁴⁵⁸, ով այդ ժամանակ Իրան էր շարժվում Հուլաղուին դիմավորելու:

Բացի Բար Հեբրեոսի արաբական ժամանակագրությունից՝ Հեթումի կարակորումյան ուղևորության մասին վկայություն ենք գտնում նաև Իզզ ալ-Դին իբն Շադդադի Al-Aḥq al-ḥaṭira երկում: Վերջինս խոսում է Մանգուին իր հնազանդությունը հայտնելու զնացած մեկ այլ տիրակալի՝ Մայյաֆարիկինի տեր ալ-Մալիք ալ-Քամիլի մասին: Ըստ նրա՝ ալ-Քամիլը Կարակորում է ուղևորվել հիջրայի 650 թ. վերջերին (1252 թ. փետրվարին) և տեղ հասնելով Խաների արքունիքում գտել է նաև Մարդինի տիրոջ որդուն, Մոսուլի տեր Բադր ալ-Դին Լուլուի որդուն, ինչպես նաև Սաի տեր Հեթումի որդի Լևոնին (Lifūn

հետազոտողներին: Տե՛ս Գ.Գ. Микаелян, *История*, стр. 309-315; Լ. Տեռ-Պետրոսյան, *Խաչակիրները*, էջ 288: Հմմտ. Պ. Չորանեան, «Հեթում Ա. քազատրի ուղեորութիւնը Կարակորում», *Բազմավեպ*, № 3-4, Վենետիկ, Ս. Ղազար, 2010, էջ 452-453:

⁴⁵⁷ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 365:

⁴⁵⁸ Bar Hebraeus, *Chronography*, p. 424, ինչպես նաև նույնի՝ Muḥtaṣar, §. 462. Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 230 և Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 375-376: Վ. Ռուբրոմը, ով այդ ժամանակ նույնպես վերադառնում էր Մանգու խանի արևմտիքից և 1255 թ. մայիսին Կիլիկիա էր հասել, հայոց Կոստանդին պալլից Ստոմ տեղեկացել է, որ Հեթումը բարենաջող կերպով հետ է վերադառնում Խանի մոտից, և որ վերջինս զգալի չափով թեթևացել է նրա հարկն ու հրամայել, որ այդուհետ էլ ոչ մի մոնղոլ պաշտոնյա չմտնի նրա երկիրը: Տե՛ս *The Journey of William Rubruck*, p. 278; *Путешествия в восточные страны*, стр. 192-193:

ibn Haytūm ṣāḥib Sīs, ընդգծումը մերն է- Գ.Դ.)⁴⁵⁹: Առաջին հայացքից արաբ մատենագրի այս վկայությունից կարելի է ենթադրել, որ Հայոց արքայի հետ Կարախորում է մեկնել նաև Հայոց թագաժառանգ Լևոնը: Սակայն այս ենթադրությունը հերքվում է Կիրակոս Գանձակեցու այն վկայությամբ, որ Հեթումն իր Լևոն և Թորոս որդիներին «եթող փոխանորդ իւր»⁴⁶⁰: Ուստի սա Իբն Շադդադի սխալն է, և «Հեթումի որդի Լևոնի» փոխարեն պարզապես Haytūm կամ Haytūm ibn Quṣṭanīn (Կոստանդինի որդի Հեթում) պիտի լիներ, ինչպես որ մամլուքյան պատմիչները նրան հաճախ կոչում են:

Ահա այսպես, Սմբատ Սպարապետի և Հեթում արքայի դեսպանագնացություններով Հայ-մոնղոլական հարաբերությունները պաշտոնական երանգներ ստացան: Հայ-մոնղոլական դաշինքի ամրագրումից հետո Կիլիկիան մոնղոլներից ռազմաքաղաքական անվտանգություն էրաշխիքներ ձեռք բերեց, փոխարենը՝ հուսալի հենարան դարձավ դեպի արևմուտք ընդարձակվելու նրանց նկրտումների կենսագործման համար: Հայոց պետությունը որոշ հարկային պարտավորություններ⁴⁶¹, իր արտաքին քաղաքական շահերը Մոնղոլական տերություն և հետո նաև Իլխանություն քաղաքական շահերին հարմարեցնելու, նրանց ռազմական ձեռնարկումներին մասնակցելու պարտավորություն ստանձնեց, բայց պահպանեց ներքին կյանքի անկախությունը և պետական իշխանություն ինքնուրույնությունը: Ըստ Ժան

⁴⁵⁹ ‘Izz al-Dīn ibn Ṣaddād, *Al-A‘lāq al-ḥaṭīra*, ց. 3.2, ք. 479: Հմմտ. R.S. Humphreys, *From Saladin to the Mongols*, p. 335, 466, n. 42.

⁴⁶⁰ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, էջ 365:

⁴⁶¹ Համդալլահ Կազվինին, ով թեև վերոհիշյալ դեպքերից 60-70 տարի անց է գրում, այնուամենայնիվ, արձանագրում է, որ «Փոքր Հայաստանը, որ *Երանի մաս չի կազմում*» (ընդգծումը մերն է-Գ.Դ.), որպես տարեկան հարկ ընդամենը 30 հզ. դինար էր վճարում իլխանական Իրանի գանձարան: Համեմատության համար նշենք, որ նույն հեղինակի վկայությամբ՝ Իկոնիայի սուլթանությունից գանձվում էր 3 մլն. 300 հզ. դիրհամ, իսկ Վրաց թագավորությունից 1 մլն. 202 հզ. դիրհար հարկ: Տե՛ս Ḥamd Allāh Mustawfī Qazwīnī, *Kitāb Nuzhat al-qulūb*, Barīl, Laydan, 1913, ք. 100, ինչպես նաև The geographical part of the *Nuzhat-al-Qulūb* composed by Hamd-allah Mustawfi of Qazwīn in 740 (1340), tr. by G. Le Strange, E.J. Brill, Leiden-London, 1919, p. 100: Հմմտ. Գ.Գ. Микаелян, *История*, стр. 316; Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները*, հտ. Բ, էջ 311-313:

դը ժուհանվիլի՝ «Նա [իմա՝ Հեթումը] այնքան ուզվիկներ բերեց իր հետ, որ կարող էր կովել արդեն Իկոնիայի սուլթանի դեմ»⁴⁶²:

Ինչպես վերևում նշեցինք, 1253 թ. Մանգու-խանի հրամանով նրա եղբայր Հուլաղուն, մեծածիր՝ զորքի գլուխ անցած, ճանապարհ էր ընկել արևմուտք՝ Իրանի և չրջակա երկրամասերի հպատակեցումն ավարտին հասցնելու⁴⁶³: Համդալլահ Կազվինին իր չափածո պատմության մեջ՝ *Zafarnāma*-ում⁴⁶⁴, գրում է, որ Հուլաղուն նախքան իր ժամանումը սուրհանդակներ է հղում Իրանի և չրջակա երկրամասերի կառավարիչներին՝ նրանց հայտնելով իր մոտալուտ գալստյան մասին և հնազանդություն, անհավատների (առաջին հերթին՝ իսմաիլականների և Բաղդադի Աբբասյանների) դեմ պատերազմում իրեն օգնություն կանչելով: «Նա [սուրհանդակ] ուղարկեց նաև մեծ ու փոքր թագավորություններ՝ Թավրիզ, Առան, Ռումի հայերին (ընդգծումը մերն է-Գ.Դ.), «Ջուրխտան» և այլ շրջաններ ու թագավորություններ», - կարդում ենք *Zafarnāma*-ի Ուորդի կատարած անգլերեն թարգմանության մեջ⁴⁶⁵: Հատվածում թարգմանչի կողմից «Ռումի հայեր» թարգմանվածը բնագրի *Arman be-Rūm*-ն է: Կարելի է ենթադրել, թե պարսիկ մատենագիրն այս արտահայտությամբ Կիլիկիայի հայերին նկատի ունի: Սակայն պարսկերեն բնագրի հետ համեմատությունից պարզվում է, որ «Ռումի հայերը» թարգմանչի սխալն է, և հատվածը ճիշտ է այսպես թարգմանել. «Նա [սուրհանդակ] ուղարկեց ... Թավրիզ, Առան, հայերին (այն է՝ Հալաստան), Ռում և Գուրջիստան և այլ...» (...*be-Tabrīz, wa-Arrān wa-Arman, be-Rūm, be-Gurğistān...*)⁴⁶⁶: Բացի այդ, Ուորդի տարընթերցած «Ջուրխտանը»

⁴⁶² *Memoirs of the Crusades by Villehardoin & de Joinville*, p. 171.

⁴⁶³ Տե՛ս **Ğuwaynī**, *Tārīḫ-e Ğahān-Guṣā*, ց. 3, ց. 89-90 և **J.A. Boyle**, *The History*, vol. 2, p. 607:

⁴⁶⁴ Համդալլահ Կազվինիի այս փշ հայտնի երկը մեզ է հասել երեք ձեռագրերով, որոնցից միայն մեկն է ուսումնասիրվել ու հրատարակվել նմանահանությամբ՝ երկու հատորով (**Ĥamd Allāh Mustawfī**, *Zafarnāma*, ց. 1-2, Österreichische Akademie der Wissenschaften, Vienna, 1999): Այդ մասին տե՛ս **Ch. Melville**, “*Ĥamd Allāh Mustawfī*”, in *EIr*, vol. XI, Fasc. 6, p. 633): Բնագրի վերջին՝ մոնղոլների պատմությանը նվիրված գլուխը, որ ցայսօր մնում է չհրատարակված, իր ատենախոսության մեջ անգլերեն է թարգմանել՝ Լ. Ուորդը: Տե՛ս **L.J. Ward**, *The Zafar-nāmah of Ĥamd Allāh Mustawfī and the Il-Khān dynasty of Iran*, Ph.D. diss., 3 vols., University of Manchester, 1983:

⁴⁶⁵ Տե՛ս Անդ., vol. 2, p. 19:

⁴⁶⁶ Տե՛ս **Անդ.** vol. 1, fol. 586b:

բնագրում հստակ ընթեռնելի Gurġistān-ն է, որը նույնն է, թե «Վրաստանը»: Այսպիսով, Համդալլահ Կազվիրին, ըստ էության, նկատի է ունեցել Մեծ Հայքի (բուն Հայաստանի) հայերին: Չէ՞ որ հայկական աղբյուրներից էլ քաջ հայտնի է, որ Ալամուտի և Բաղդադի (և հետո նաև Մայյաֆարիկի) գրավմանը վրացիների հետ մեկտեղ նաև Մեծ Հայքի հայ իշխաններ են մասնակցել, ինչպես օրինակ, Ավագ Ջաքարյանը, Պոռ խաղբակյանը և այլոք⁴⁶⁷: Այս ենթադրությունը վերջնականապես հաստատվում է Ռաշիդ ալ-Դինի Ğāmi' al-tawārīḥ-ի հետ համեմատությամբ: Վերջինս գրում է, որ երբ Հուլաղու խանն անցավ Ջաջուռն (Ամուդարյա) գետը, նրա մոտալուռ ժամանման լուրը ստացվեց տարածաշրջան, և նրա մոտ ծառայության անցնելու շտապեցին Իրանի «բոլոր սուլթաններն ու արքաները», ինչպես նաև Ռումի սուլթաններ Իզզ ալ-Դինը և Ռուքն ալ-Դինը, Ֆարսից՝ ավաբեկ Սաադը, Իրաքի, Խորասանի, Ագարբայջանի (Ատրպատականի), Առանի, Շիրվանի և Վրաստանի արքաներն ու ազնվականները՝ «բոլորն էլ պատշան նվերներով»⁴⁶⁸: Զուր չէ, որ մոնղոլ ուսումնասիրող Դ. Բայարսայխանը, անդրադառնալով Ռաշիդ ալ-Դինի այս վկայությանը, գրում է, որ թեև պարսկագիր պատմիչը վերոբերյալ երկրների շարքում չի նշում Հայաստանը, այնուամենայնիվ, հասկանալի է, որ նա Վրաստանի անունը հիշատակելով՝ նաև [Մեծ Հայքի] հայ իշխաններին է նկատի ունեցել⁴⁶⁹:

Մինչև 1256 թ. ավարտին հասնելով Իրանի նվաճումը՝ Հուլաղուն փաստորեն հիմք դրեց մի նոր մոնղոլական պետական կազմավորման, որին մենք այսօր Իլխանություն ենք կոչում⁴⁷⁰: Չեղոքացնե-

⁴⁶⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Դ. Բայարսայխանի գրքում՝ D. Bayarsaikhan, *The Mongols*, pp. 122-135:

⁴⁶⁸ Rašīd al-Dīn, Ğāmi' al-Tawārīḥ, ց. 2, ց. 688-689; Рашид-ад-Дин, Сборник летописей, том III, стр. 25. Հմմտ. Banākātī, Rawḍat ulī al-albāb fī ma'rifat al-tawārīḥ wa-l-ansāb, be-kūšēš-e Ğāfar Ši'ār, Tehrān, 1348/1969, ց. 414-415.

⁴⁶⁹ D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 125.

⁴⁷⁰ Գիտական գրականության մեջ Հուլաղուն և նրա հաջորդներին տրված *ilhān* տիտղոսի մի քանի ստուգաբանություններ կան, քեև նրանցից ամենատարածվածը «ենթակա խան» բացատրությունն է, որ շեշտում է նրանց ստորադասությունը Կարակորումում նստող Մեծ խանին: Տե՛ս Th. Allsen, *Mongol Imperialism*, p. 48: Հմմտ.՝ R. Amitai-Preiss, *Mongols*, pp. 13-14:

լով Ալամուռուտի իսմայիլականներին և դրավելով Բաղդադը՝ նա արդեն կազմ-պատրաստ էր ներխուժելու Ասորիք, որտեղ դեռ շարունակում էին գոյատևել կործանված Այյուբյան դինաստիայի մնացուկները: Հուլիսի 1260 թ. ասորիքյան արշավանքի և դրանում Հայոց արքա Հեթումի ունեցած դերակատարության մասին նախորդ ենթադրյալում արդեն խոսել ենք: Ծիշտ է՝ Այն Ջալուտում կրած պարտությամբ Հուլիսի 1260-ի ձախողեց Ասորիքում հաստատվելու մոնղոլների առաջին հնարավորութունը, բայց նրան հաջորդած տիրակալները բնավ չհրաժարվեցին այդ նպատակից: Հետագայում ևս՝ 1281, 1299, 1300, 1303, 1312-1313 թթ. մոնղոլ իլխանները կրկին մեծ արշավանքներ ձեռնարկեցին դեպի Ասորիք, թեև բոլոր այս դեպքերում, չնայած դաշնակիցներից և հպատակ երկրներից՝ Մերձավոր Արևելքի խաչակրաց պետություններից, Վրաստանից, Ռումի սուլթանությունից և հատկապես Կիլիկյան Հայաստանից ստացած օգնությանը և արձանագրած ժամանակավոր հաջողություններին՝ վերջին հաշվով պարտված դուրս եկան Մամուլուբյան սուլթանության դեմ պայքարում: Ամիտայը սրա ամենահավանական պատճառ է նշում այն, որ այս երկու տարածաշրջանային ուժերի վաթսուներեք դիմակայությունը բնագործում իլխանության հետ հարաբերությունները գրեթե մշտապես առաջին տեղն էին զբաղեցնում Մամուլուբյան սուլթանության արտաքին քաղաքականության օրակարգում, մինչդեռ իլխանության դեպքում Սուլթանության հետ հարաբերություններից էլ ավելի կարևոր առաջնահերթություն կար՝ Զոչիի մոնղոլական ուլուսի կամ Ոսկե Հորդայի հետ պատերազմը⁴⁷¹ կողկասյան ճակատում միանձնյա գերիշխանության հասնելու համար: Այս պայքարում առավել հաջողակ էր Ոսկե Հորդան, որի զորքերն արդեն 1263 թ. հունվարի 14-ին Թերեք գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում առաջին վճռական հաղթանակն էին տանում Հուլիսի 1260-ի որդի Աբաղայի առաջնորդած բանակների նկատմամբ: Իլխանության համար այս հարցն ավելի էր բարդանում եգիպտոսի սուլթան ալ-Ջահիրի Բաբարսի և Ոսկե Հորդայի իսլամ ընդունումից հետո:

նած Բերքե խանի (1257-1267 թթ.) օրոք այդ երկու պետությունների միջև հաստատված բարիդրացիական հարաբերությունների և դիվանագիտական ակտիվ շփումների պատճառով⁴⁷²:

Մամլուք-մոնղոլական պատերազմը ոչ պակաս դրամատիկ ընթացք ունեցավ նաև երկու տերությունների բախման առաջնագծում հայտնված Հայոց թագավորության համար, որը, մոնղոլների մշտական դաշնակիցը լինելով, վերջիններիս ամեն մի անհաջողությունից և նահանջից հետո հարկադրված էր կանգնել մամլուքների «դամոկլյան սրի» առաջ և իր վրա ընդունել նրանց ամենածանր հարվածները: «Մոնղոլներից էական օգնություն ստանալու հետ մեկտեղ (ավյալ դեպքում նկատի ունի Հեթում Ա-ին) տաժած բոլոր հույսերն այդպես էլ չփարատվեցին, և մա միայնակ մնաց իր արկածախնդրությունների հետևանքները հաղթահարելիս», - մի առիթով գրում է Ռ. Ամիտայը⁴⁷³: «[Մոնղոլների նկատմամբ] ունեցած հավատարմության դիմաց հայերը երբեք չստացան ավելին, քան մամլուքների պատճառած տառապանքը դեպի հյուսիս՝ Ռում, ուղղված մեծաց արշավանքների ժամանակ»⁴⁷⁴, - երկրորդում է մեկ այլ արդի ուսումնասիրող՝ մոնղոլագետ Ջորջ Լեյնը: Արաբ հետազոտող Աբդ Ալլահ Ալ Սանին գրում է, որ մամլուք սուլթանների՝ հայերի դեմ տրամադրվելու առաջնապատճառը մոնղոլների հետ նրանց հաստատած դաշնակցությունն էր: Մամլուքների հարվածները հաջորդեցին մեկը մյուսին՝ վերջնական հաշվում հանգեցնելով Հայոց թագավորության տապալմանը 1375 թ.⁴⁷⁵: Իսկ Շառուքաթ Ռամադան Հուլջան էլ եզրահանգում է, որ հայ-մոնղոլական դաշնակցությունը ոչ միայն չունեցավ ցանկալի վերջնարդյունքը՝ խարխուլելու Բազրի մամլուքների պետությունը, այլ ընդհակառակը՝ նրան կանգնեցրեց «մամլուքյան

⁴⁷² Մամլուքյան սուլթանության և Ոսկե Հորդայի հարաբերությունների մասին տե՛ս **նոյնի՝** Mongols, pp. 78-86; **A.F. Broadbridge**, *Kingship and Ideology in the Islamic and Mongol Worlds*, Cambridge of University Press, Cambridge, 2008, pp. 50-63 և հատկապես՝ **С. Закиров**, *Дипломатические отношения Золотой Орды с Египтом (XIII-XIV)*, Наука, Москва, 1966:

⁴⁷³ **R. Amitai**, “In the aftermath”, p. 10.

⁴⁷⁴ **G. Lane**, *Early Mongol rule in thirteenth century Iran: A Persian renaissance*, Routledge Curzon, 2003, p. 38.

⁴⁷⁵ **A.A.Ğ.A. Āl Tānī**, *Al-Ālāqāt*, §. 195. Հմմտ. **M. Canard**, “Le Royaume”, p. 221.

անգույք հարվածների» տակ՝ պատճառ դառնալով երկրի մշտական ավերածություններին, նրա բնակչության սպանդին ու գերեվարությունը: Ջնայած այս ամենին՝ Հայոց թագավորությունը շարունակեց իլխանների ազդեցության տակ մնալ անգամ վերջիններիս իսլամացումից հետո՝ վերածվելով այդ պատերազմի «փալոսյան նոխագի»⁴⁷⁶: Այս հետազոտողների կարծիքները հաստատում է մամլուք մատենագիր Կալ-Ումարին, ով իր *Masālik al-abṣār* երկում գրում է. «Նրա («Սսի երկրի») արևան հավատարիմ է «Իրաֆի և Պարսկաստանի տիրոջը» (իմա՝ իլխանին) և ծառայության մեջ է նրա մոտ (*muntazam fi silkīhi*): Ամեն անգամ, երբ վերջինիս զորքերն Ասորիք էին ելնում եգիպտոսի տիրոջ դեմ կոպելու, նա էլ նրանց հետ էր դուրս գալիս: Նրա զորքերի բազմությունն աստիճանաբար շատացավ, ահագնացավ նրանց շարությունը (*nikāya*) իսլամի և նրա «ժողովրդի» (մուսուլմանների) նկատմամբ: Դրա հետ մեկտեղ նա շողոփոթում էր եգիպտոսի տիրոջը և ֆժնում՝ ամենամյա սահմանված չափով հարկ վճարելով: Յուրաֆանյուր անգամ, երբ եգիպտոսի և Ասորիքի զորքերն Կալ-Ֆիրայով (բնագրում փոփոխվել է անհասկանալի՝ *fi 'uqr al-Bira*) այնտեղ են արշավում, գրավում են երկիրը, գերեվարում կանանց և երեխաների»⁴⁷⁷: Այլ-Ումարիի այս վկայությամբ եզրափակենք 1250-1260 թթ. Մերձավոր Արևելքի քաղաքական քարտեզի վրա տեղի ունեցած փոփոխություններին, ի մասնավորի՝ հրապարակ եկած երկու հակոտնյա ուժերի՝ Մամլուքյան սուլթանության և Իրանի մոնղոլական իլխանության հարաբերակցությունը և ձևավորված նոր միջազգային իրադրության մեջ Կիլիկիայի Հայոց թագավորության ստանձնած դերին նվիրված այս մասը: Սա օգտակար կլինի աշխատանքի հաջորդ մասում ծաղկաբաղ թարգմանությունում ներկայացված հատվածներում նկարագրված իրադարձությունների քաղաքական հետնախորքն ու տրամաբանությունը հասկանալու առումով:

⁴⁷⁶ Տ.Ր. Խաչատրյան, *Al-‘Ālāqāt*, թ. 511-512.

⁴⁷⁷ Ալ-‘Սմարի, *Masālik al-abṣār*, թ. 3, թ. 316.